

629

ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՏ—ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ
ԳԱՏԱՐԾԼԱԳՈՐԾՄԱՆ ԴԻՏԱՆՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

**ԳՐԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ
ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ**

8(077)

Ա-76

Լ. ՈՒՍՏՐՈՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍԱՏ—ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԳԻՏԱ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ 12 OCT 2003


8(077)

Ա-76 Ս. ԱՍՏՎԱԾԱՏՐԹԱՆ

Myr

**ԳՐԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ
ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ**

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ



ԼՈՒՍԶՐԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՈԴԵՔՍՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՈԴԵՔՍՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՈԴԵՔՍՏ

3248-40

Պատ. խմբագիր՝ Ա. Ղաբիրյան
 Տեխ. խմբագիր՝ Հ. Կարապետյան
 Սրբագրիչ՝ Վ. Պողոսյան
 Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Պարոնիկյան
 Հանձնված է արտադրության 1940թ. հունիսի 26-ին
 Մատրագրված է տպագրության 1940 թ. ոգոստոսի 16-ին
 ՎՋ. 674 հրատ. № 47, պատվեր № 157, տիրաժ 1300

Հասցեատի տպարան, Յերևան, Տեքյան № 187

* *

Լեզուն արտահայտվում է յերկու կերպ՝ բանավոր և գրավոր։
 Գրավորը բանավորի սկզբունքն է Գրագեղաները գործ ունեն լեզվի
 այս յերկու կողմերի հետ, անգրագեղաները՝ միայն բանավորի
 հետ։

Յերբ մարդն սկսում է խոսել նրա մտապատկերում տեղ են
 բռնում առանձին բառերն իրենց հնչյունակազմով։ Նա սկսում է
 բառերով կազմած նախադասություններ հասկանալ, զրանց որի-
 նակով կազմել նոր նախադասություններ, արտահայտել նոր
 մտքեր։ Այս ճանապարհով մարդը ձեռք է բերում բանավոր
 խոսքի ունակութուն։ Բանավոր խոսքի արժեքն ավելի կայուն
 կլինի, յերբ մարդը կարող է այն վերարտադրել նաև գրավոր ձևով։

Լեզվի այս յերկու կողմերը հիմնականում կազմում են մեկ
 միասնություն։ հնչյունական, ձևաբանական, լեզսիկական, շա-
 րահյուսական և փճաբանական տեսակետից։

Լեզվի այս յերկու կողմերն ունեն իրենց առանձնահատ-
 կությունները, սակայն մեկ հետաքրքրողը գրավոր խոսքն է։

Գրավոր խոսքը գերազանցապես հենվում է բանավոր խոսքի
 վրա. դա նույն բանավոր խոսքն է պլյուս ուղղագրություն և կե-
 տագրություն։ Սրանից հետևում է, Վոր գրավոր խոսքի հաջո-
 դությունը կախված է բանավորի յուրացումից և վորակից։ Նույն-
 իսկ մի շարք ուղղագրական կանոնների յուրացումը կախված է
 ճիշտ արտասանությունից և բառակազմական վերլուծությունից,
 վոր կարելի յե նախապատրաստել բանավոր խոսքի միջոցով։

Գրավորն իր հերթին ամրապնդում է ճիշտ արտասանու-
 թյունը, բառի ճիշտ ձևի պատկերացումը, բանավոր ուղիղ ար-
 տահայտությունը։ Գրավոր խոսքն ունի մոմենտներ, վորոնցով
 նա տարբերվում է բանավոր կենդանի խոսքից։ Դա արտասա-
 նության վորոշ գեպեր են, որինակ՝ «կարգալ» գրվում է «գ»-ով,
 բայց արտասանվում է «թ»-ով։

Գրավոր խոսքը պետք է միշտ կապ պահպանի բանավորի

հետ, վորպեսզի կարողանա բանավոր խոսքը վերարտադրել նույնությամբ:

Արդի հայերեն գրական լեզուն հիմնականում հնչյունական գրություն ունի, այսինքն՝ մի հնչյուն գրվում է մի տառով: Այդ պատճառով ել ուղիղ գրելու համար հնչյունական պատկերացումները պիտի սերտ կապված լինեն բառի նշանակության պատկերացման հետ:

Դրելը շատ բարդ ազդեցություն է, վորին մասնակցում են՝ լոգական, արտասանական-տեսողական և մոտորային-շարժողական զգայությունները, ինչպես նաև քերականական գիտելիքները:

Այս ֆակտորներից յուրաքանչյուրը գրավոր խոսքի յուրացման համար ունի իր նշանակությունը: Սակայն լոգության միջոցով ձեռք բերված բառի մտապատկերի տպավորությունը յերկար չի պահվում, բառի ուղիղ արտասանությունը շուտ մոռացվում է, վորի հետևանքով և ստացվում է սխալ մտապատկեր: Այդու հանդերձ գրագիտության առաջին տարիների համար մեծ նշանակություն ունեն լոգության հետ կապված ուղղագրական գիտելիքները:

Տեսողական զգայարանի միջոցով ստացված տպավորությունն ավելի տևական է կայուն է: Առաջին հերթին դրա միջոցով է, վոր մենք յուրացնում ենք ուղղագրությունը: Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, վոր տեսողական ֆակտորը ուղղագրության ուսուցման ժամանակ տարբեր հասակում ունի տարբեր չափի նշանակություն: Ստորին դասարաններում քերականական գիտելիքներն ավելի քիչ նշանակություն ունեն ուղղագրության համար, քան տեսողական ֆակտորի միջոցով ձեռք բերված մտապատկերները: Մինչև անգամ վորևէ քերականական կանոն անցնելուց հետո ել յերեխաները գյուրությամբ չեն կարողանում գրելիս զեկավարվել այդ կանոնով: Նրանք սովորաբար հենվում են տեսողական մտապատկերի հիշողության վրա: Բարձր դասարաններում հետզհետե թուլանում է տեսողական ֆակտորի դերը և ուժեղանում քերականական գիտելիքների դերը, թեև տեսողականը շարունակում է ներգործել նաև ավելի բարձր դասարաններում:

Ուղղագրության յուրացման կարևոր ֆակտորներից է մոտորային—շարժողական հիշողությունը, վոր աշխատում է վոչ թե անշատ, այլ տեսողական մտապատկերի հետ կապված: Ինչ գլըվում է, այն ընդունվում է նաև տեսողությամբ, ուրեմն շարժող

ական և տեսողական զգայությունները զուգորդվում են իրար հետ: Այդ միջոցով ձեռք բերված տպավորությունը շատ յերկար է պահվում և մեծ նշանակություն ունի ուղիղ գրելու համար:

Սկզբնական շրջանում գրելիս աշակերտը մտածում է բառի նշանակության մասին և ունենում է բառի համապատասխան հնչյունային պատկերացում: Իսկ հետագայում, յերբ նա գրելու վարժություն է ձեռք բերում, առաջին հնչյունների վերլուծական գիտակցությունն աստիճանաբար նվազում է, և բառի տեսողա-շարժողական մտապատկերն անմիջականորեն կապվում է բառի նշանակության հետ, առանց բառի հնչյունական պատկերացման: Սակայն ստորին դասարաններում աշակերտը պետք է ունենա տվյալ բառի առանձին հնչյունների պատկերացումը, նա պետք է գիտենա բառի յուրաքանչյուր հնչյունի գրությունը: Հետագայում վարժությունների շնորհիվ նա այդ բառի ուղիղ գրության պատկերացումը կունենա առանց առանձին հնչյունների անխուսափելի պատկերացման: Վորպեսզի աշակերտը ուղիղ գրել սովորի, անհրաժեշտ է, վոր դասատուն գրության ժամանակ ընդգծել տա բառի այն հնչյունը կամ բառը, վոր աշակերտը կարող է սխալ գրել:

Բառի ձիշտ գրությունը կապված է բառի նշանակության և նրա քերականական կադմության իմացության հետ:

Ուղղագրության համար շատ մեծ նշանակություն ունի քերականական կանոնը, գրության առանձին զեղքերի ընդհանրացումը:

Յուրաքանչյուր ուղղագրական կանոն անկասկած ուղղագրության ուսուցման պրոցեսը դարձնում է ավելի իմաստավոր և նպաստում է ավելի խոր յուրացման: Անհրաժեշտ է լավ գիտենալ քերականություն, կարողանալ բառը վերլուծության յենթաբաժին, որինակ, բարդ բառը բաժանել յարդ բառերի, գտնել բառարմատները և գիտենալ այդ արմատների գրությունը և այլն: Քերականական վարժությունների միջոցով այդ գիտակցությունը դառնում է ունակություն, և գրավոր աշխատանքի ժամանակ մենք վարժվում ենք ուղիղ գրելուն, առանց մտածելու առանձին կանոնների մասին:

Բոլոր բառերի ուղղագրությունը չի ընդգրկվում քերականական կանոնների մեջ: Ունենք հազարավոր բառեր, վորոնց գրության ձևը չի բացատրվում այս կամ այն կանոնով: Հետևապես ուղիղ գրել սովորելու համար չպետք է բավականանալ միայն

քերականական կանոններ իմանալով: Պետք է մեր ուշադրութիւնը կենտրոնացնենք և այն բառերի գրութեան ուսուցման վրա, վորոնք չեն յենթարկվում քերականական վորևէ կանոնի: Այդպիսի բառերի ուղղագրութիւնը պետք է ձեռք բերենք տեսողա-մոտորային ֆակտորների ոժանդակութեամբ: Ուրեմն այդպիսի բառերի համար պետք է կատարել հատուկ գրավոր վարժութիւններ:

Վորպեսզի քերականական և ուղղագրական գիտելիքները աշակերտի համար ունակութիւն դառնան, անհրաժեշտ է դրպրոցներում ունենալ տարբեր տիպի գրավոր վարժութիւններ: Բոլոր տեսակի գրավոր աշխատանքները պետք է հետաման ուղղագրական, կետադրական, շարահյուսական, շարադրական և վոճական գիտելիքները դարձնելու ունակութիւն:

Յաճոր դասարաններում աշակերտները կատարում են ուղղագրական սխալներ, այն եւ գլխավորապես ավանդական և բարբառային, վորոնք չեն ընդգրկվում քերականական կանոնների մեջ: Ավանդական տիպի սխալները վերացնելու համար դասատուն պիտի ստեղծի աշակերտի մեջ բառի ճիշտ գրութեան մտապատկեր՝ տեսողա-մոտորային ֆակտորների ոժանդակութեամբ: Այդ նպատակի համար պետք է կատարել արտագրութիւն և թելադրութեան վորոշ տեսակներ: Բարբառային տիպի սխալները հնարավոր է վերացնել միայն այն դեպքում, յիւր մենք աշակերտին սովորեցնենք ճիշտ արտասանել այս կամ այն բառը: Այդ պետք է անել բանավոր խոսքի ուսուցման ընթացքում՝ կարդալիս կամ խոսելիս: Յերբ յերեխան սովորում է ճիշտ արտասանել և ճիշտ կարդալ, շարունակ լսում է ճիշտ արտասանութիւն, այդ դեպքում նա կկարողանա և ճիշտ գրել: Բարձր դասարաններում, վորտեղ գլխավորապես սխալները կրում են կետադրական-շարահյուսական բնույթ, պետք է տալ շարադրութիւն իր տարբեր տեսակներով: Բարձր դասարաններում թելադրութեան ավելի քիչ տեղ պետք է տալ, իսկ արտագրութիւնը բացառիկ դեպքերում, յիւր աշակերտը դասարանի համեմատութեամբ շատ ուղղագրական սխալներ է կատարում: Գրավոր տեսակները հիմնականում չորսն են.

1. Արտագրութիւն.
2. Թելադրութիւն.
3. Շարադրութիւն.
4. Քերականական վարժութիւններ:

Գրավոր տեսակներից յուրաքանչյուր աշակերտը յուրացնում է տարբեր ֆակտորների միջոցով, և յուրաքանչյուր գրավոր աշխատանքի տեսակը զարգացնում է աշակերտի մեջ տարբեր կարողութիւն:

1. ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտագրութեան ընթացքում աշակերտն ստանում է առաջադրված տեքստի տեսողական ճիշտ տպավորութիւն: Առանձին հնչյունների միացման միջոցով, առանձնապիս ցածր դասարաններում զարգանում է աշակերտի տեսողա-մոտորային ունակութիւնը: Տառաձանաչութիւնն, ինչպիս հայտնի յեն, անցնում ենք անալիտիկ սինթետիկ-հնչյունային միջոցով: Այս շրջանում գրավոր խոսքի ուսուցումը տարվում է բանավոր խոսքին զուգընթաց և միաժամանակ: Այս շրջանում արտագրութիւնը հաճախ վերածվում է արտանկարման: Դրա դեմ դասատուն պետք է պայքարի: Աշակերտներին պետք է սովորեցնել, վոր արտագրելիս գրեն ամբողջ բառերով և վոր թե տառ-տառ: Այդ նպատակի համար կարելի յէ կատարել հետևյալ վարժութիւնը: Ուսուցիչը գրաթախտակի վրա գրում է մի բառ: Աշակերտները կարդում են: Բառը հնչյունների և վանկերի վերլուծելուց հետո ուսուցիչը ջրնջում է գրաթախտակի վրա գրված բառը, իսկ աշակերտները հիշողութեամբ այդ բառը գրում են իրենց տետրերում:

Աստիճանաբար վարժութիւնների միջոցով աշակերտներին պետք է սովորեցնել արտագրելու վոր միայն բառերով, այլ նույնիսկ ամբողջ նախադասութիւններով: Այս վարժութիւնների միջոցով աշակերտներին սովորեցնում ենք ամբողջական բառերով արտագրել: Դրանով զարգանում է աշակերտի տեսողական հիշողութիւնը, վոր մեծ նշանակութիւն ունի անսխալ գրելու համար: Դիտակցական արտագրութիւնը խոշոր նշանակութիւն ունի բառի ճիշտ գրութիւնը. սովորելու համար: Յերեխան տեսողա-մոտորային ֆակտորների միջոցով ձեռք է բերում տվյալ բառի ճիշտ գրութեան մտապատկերը: Այդ ձևով ձեռք բերված մտապատկերն ավելի կայուն և տեւական է լինում, վոր լիզվի ուսուցման համար խոշոր նշանակութիւն ունի:

Դասատուն մեծ ուշադրութիւն պետք է դարձնի բանավոր դասին աշակերտի արտասանութեան վրա, վորովհետեւ հնչյունական տիպի սխալները հնարավոր է կանխել միայն ճիշտ արտա-

ստանութեամբ: Հնչյունական տիպին են պատկանում այն սխալները, վորոնք տեղի յեն ունենում գրութեամբ և արտասանութեամբ չափաքերովող բառերի մէջ: Այս տիպի սխալներ են համարվում բառի մէջ տառ բաց թողնելը, ավել տառ գրելը, տառը յետ ու առաջ գրելը և այլն: Այս տիպի սխալները կանխելու համար մեծ նշանակութիւն ունի գրաճանաչութեան ուսուցման մեթոդը: Այդ սխալները կարելի յե կանխել գիտակցական արտագրութեան միջոցով: Արտագրութեան ժամանակ պետք է յերեխային արտասանել տալ բառը մի քանի անգամ, վերլուծել այն, ապա գրել տալ: Յերբ յերեխան գիտակցական մոտեցում է ունենում բառի մասերին, հնչյուններին, սովորում է բառի ճիշտ արտասանութեանը, ապա նա ստանում է բառի ճիշտ գրութեան մտապատկեր:

Հնչյունական տիպի սխալները կարելի յե կանխել նաև թելադրութեան միջոցով: Այդ մասին կխոսվի թելադրութեան վերաբերող մասում: Յեթե աշակերտի մէջ ուժեղ է լսողական ըմբռնումը, նա թելադրութեան ժամանակ քիչ սխալ կանի, իսկ յեթե ուժեղ է տեսողական ըմբռնումը նա արտագրութեան ժամանակ քիչ սխալ կանի:

Գիտակցական արտագրութեանը նպաստում է կանխելու նաև ավանդական տիպի սխալները: Ավանդական են համարվում այն բառերի սխալները, վորոնց գրութեանը չի համապատասխանում արտասանութեան, որինակ՝ գրվում է «մարդ, վորդ, յերդ, բարձրանալ», իսկ արտասանվում է՝ «մարթ, վորթ, յերթ, բարցրանալ»: Այս տիպի սխալները կանխելու հնարավոր է միայն այն դեպքում, յերբ կարողանանք ստեղծել այդ բառերի ճիշտ գրութեան մտապատկեր՝ գիտակցական արտագրութեան միջոցով:

Աշակերտը, տեսնելով բառերի ճիշտ գրութեանը, ձեռք է բերում ճիշտ գրութեան մտապատկեր: Տեսողական և մոտորային ֆակտորների միջոցով ձեռք բերված տպավորութեանները համակցութեանը կտա այս տիպի գրութեան ունեցող բառերի ճիշտ գրութեան մտապատկեր: Աշակերտն ուսուցման առաջին տարիներում շարունակ պետք է տեսնի սովորած բառերի ճիշտ գրութեանը: Դրա համար այդ դասարաններում պիտի կախել այդ բառերի աղյուսակներ: Ուսումնասիրութեանները ցույց են տվել, վոր ավանդական տիպի սխալներ կատարում են նաև բարձր դասարաններում, այնպես վոր արտագրութեանը, վորպես գրավոր մի տեսակ, կարելի յե գործադրել նաև բարձր դասարաններում:

Այսպիսի դեպքում արտագրութեանը կատարվում է աւելի հետաքրքիր ձևով, վորի մասին մանրամասն կխոսվի արտագրութեան տեսակների բաժնում:

Արտագրութեանը դրավորի մի տեսակն է, վորի միջոցով, ինչպես ասվեց, կարելի յե վերացնել վորոշ տիպի ուղղագրական սխալներ:

Կան արտագրութեան հետեյալ ձևերը.

1. Արտագրութեան տեքստից.
2. Ընտրական արտագրութեան.
3. Ստեղծագործական արտագրութեան.
4. Ազատ արտագրութեան:

1. ՏԵԽՍՏԻՑ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տեքստից արտագրութեանը պետք է տանել գիտակցորեն: Կանխադ պետք է բացատրել բառերի գրութեանը, մանրամասն անալիզի յենթադէլ՝ բաժանելով բաղադրիչ մասերի, վանկերի, վանկերը՝ հնչյունների և ապա անցնել առաջադրված տեքստի արտագրութեան: Դասատուն արտագրութեան պրոցեսում աշակերտի ուշադրութեանը պետք է կենտրոնացնի սովորելիք բառի, վանկի և հնչյունի վրա: Յերբ անցնում են նոր բառ կամ հնչյուն, ապա արտագրելիս պետք է այդ բառը գրել ուրիշ գույնով կամ հնչյունն ընդգծել: Իրա շնորհիվ յերեխաների ուշադրութեանը կկենտրոնանա տվյալ բառի կամ հնչյունի վրա և դրանով նոր բառի գրութեանը կընդունվի ավելի ուշադիր, և մտապատկերները կլինեն ավելի տպավորիչ: Յերեխան, բացի տպավորիչ մտապատկեր ստանալուց, պետք է ստացած մտապատկերը դարձնի կայուն: Դրա համար անհրաժեշտ է համապատասխան վարժութեաններ կատարել: Դասատուն վորեւ ուղղագրական կանոն անցնելիս՝ պետք է աշակերտներին արտագրել տա այնպիսի տեքստ, վորը ըստ հնարավորին հագեցված լինի նոր սովորած բառերով:

Արտագրութեանը տեքստի, գրատախտակից կամ գրքից սովորաբար գործադրվում է ցածր դասարաններում:

Իրրե որինակ բերենք մի տեքստ.

«Առաջին տարին Վարդանն ուսման մէջ ցույց տվեց բավականին շնորհք: Սովորեց կարգաւ ուսերեն և հայերեն, նաև մի փոքր գրել, նա ամեն յերեկո դասերը կրկնում էր հոր մոտ և արժանանում նրա գովասանքներին»:

Մինչև արտագրութեան անցնելը դասատուն տեքստը կարգալ է տալիս աշակերտներին մեկին կամ յերկուսին, ապա անցնում բառերի վերլուծութեան:

Դասատու—Ինչպէս է գրվում և ինչպէս է արտասանվում «Վարդան» բառը:

Աշակերտ—«Վարդան» գրվում է «դ» տառով, բայց արտասանվում է «թ»-ով:

Դասատու—Բացի «Վարդան» բառից, ինչ բառեր գիտեք, վորոնց գրութեանն ու արտասանութեանն տարբեր են:

Աշակերտ—Կարգ, վարդ, մարդ, բարձր և այլն:

Դասատու—Ո՞վ կասի ինչպէս «Վարդան» գրված է յերկու «ն»-ով:

Աշակերտ—Յերկու «ն»-ով է գրված, վորովհետև մեկ «ն»-ն բառի վերջին տառն է, իսկ մյուս «ն»-ն վորոշիչ հոգ է: Գրված է «ն» և վոչ «ը», վորովհետև հաջորդ բառն սկսվում է ձայնավորով:

Դասատու—Բացի այս բառերից տեքստում ուրիշ ինչ բառեր ունենք, վոր վորոշիչ հոգ ունեն:

Աշակերտ—«Դասերը» բառի «ը»-ն վորոշիչ հոգ է:

Դասատու—Ինչո՞ւ «շնորհք» բառում «ը»-ից հետո գրվում է «հ» տառը:

Աշակերտ—«Հ» տառով է գրվում, վորովհետև բառարմատն է «շնորհ», իսկ «ք» հնչյունը ածանց է, վոր ափսլանալով «շնորհ» բառի վրա դառնում «շնորհք»:

Դասատու—Ո՞վ կարող է «շնորհ» արմատից ուրիշ բառեր կազմել:

Աշակերտ—Շնորհալի, շնորհիվ, շնորհել, անշնորհք:

Դասատու—Հայնք բառատեսերը և այս արմատից կազմված նոր բառերը գրեցեք բառատեսերում (գրելուն կարելի չէ հատկացնել մի յերկու բառ):

Այսպիսի մանրամասն վերլուծութեանից հետո աշակերտներն սկսում են արտագրել՝ գիտակցելով յուրաքանչյուր բառի նշանակութիւնը և իմանալով նրանց ուղղագրութիւնը:

2. ԸՆՏՐԱԿԱՆ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրական արտագրութիւնը կարելի չէ տանել համարյա բոլոր դասարաններում, միայն թէ տարբեր բովանդակութեամբ և ձևերով:

Հոգւածից ընտրվում են վորոշ նպատակ հետապնդող նախադասութիւններ կամ կտորներ և արտագրվում: Այդ մասերը կա-

րող են բովանդակել գեղարվեստական պատկերներ, դաստիարակչական ժառանգութեան, անձնավորութիւնների խոսակցութիւնների, ցիտատներ և այլն: Արտագրութեան համար մասեր ընտրելիս պետք է նկատի ունենալ տվյալ շրջանում անցած ուղղագրական կանոնին վերաբերող բառերը: Ցածր դասարաններում այդ աշխատանքը կատարվում է դասարանում, իսկ բարձր դասարաններում համանարարվում է տանը կատարելու: Յնթի բարձր դասարաններում աշակերտն ուղղագրական սխալներ հատ է կատարում, ապա կտրելի չէ, որինակ, անցած հոգւածից արտագրել տալ գործող անձի բնութագրութեան վերաբերող մասերը, կամ գեղեցիկ նկարագրական կտորները, անփորիգմները և այլն: Իհարկէ այդ մասերում պետք է լինեն ուղղագրութեան համար նշանակութիւն ունեցող բառեր:

Ընտրական արտագրութեան տալիս՝ դասատուն պետք է ընտրի գեղարվեստական կտորներ, վորովհետև յերկար այդ կտորն արտագրելիս, բացի ուղղագրական ունակութիւնների ձեռք բերելուց, կրթում է նաև իր վոճը, վոր մեծ նշանակութիւն ունի գրավոր խոսքի համար:

Ընտրական արտագրութեան ժամանակ կարելի չէ հոգւածից արտագրել նաև գործող անձանց բառերը: Աշակերտներից վոմանք արտագրում են մի անձի խոսքերը, վոմանք մյուս անձի, այնուհետև դասարանում կարգում են, և ստացվում է մի փոքրիկ բեմադրութիւն, վոր շատ է հետաքրքրում աշակերտներին՝ վոչ միայն ցածր դասարաններում, այլ նաև բարձր դասարաններում:

Ընտրական արտագրութիւնը կոչվում է նաև նպատակային, վորովհետև դասատուն վորոշ նպատակ հետապնդող կտոր է արտագրել տալիս: Դրինակ՝ վորեւէ դաստիարակչական նշանակութիւն ունեցող մաս, կամ մի գեղեցիկ նկարագրութիւն և այլն:

3. ՍՏԵՂԾԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստեղծագործական արտագրութիւնը կատարվում է հետեւյալ ձևով.

ա) բառերը փոխելով.

բ) բառերն անկացնելով.

գ) նախադասութիւնները փոփոխելով:

ա. Արտագրութիւն՝ բառերը փոխելով.—

Դասադուն գրում է գրատախտակի վրա մի նախադասութիւն,

վորը կազմված պետք է լինի այնպիսի բառերից, վորոնց ուղ-
ղագրությունն է դասառույն անցնում: Այնուհետև նա առաջար-
կում է աշակերտներին արտագրել այդ նախադասությունը՝ փո-
խելով վորոշ բառեր այնպես, վոր նախադասության միտքը
չփոխվի: Որինակ՝ դասառույն գրում է դրատախտակի վրա. «Ներս-
մուսն նախկին կալվածատերերի մեծ ալդին, վոր այժմ հանձ-
նելված է կոլխոզին»: Աշակերտները գրում են իրենց տետրերում
բառերը փոխելով այսպես. «Ներս մուսն նախկին կուլակի հըս-
կայական ալդին, վորը ներկայումս պատկանում է կոլխոզին»:
Դասառույն գրում է՝ «Հողն ել լավ աշխատանքով դարձել է պլո-
դաբեր, հեկտարից քսան ցենտներ բերք են ստանում»: Աշա-
կերտներն իրենց տետրերում գրում են. «Լավ աշխատանքի շնոր-
հիվ հողը դարձել է պտղաբեր և այժմ յուրաքանչյուր հեկտարից
ստանում ենք քսան ցենտներ բերք»:

բ. Արտագրություն՝ բառեր աժելացնելով
կամ նախադասություններն ընդարձակելով.—
Դասառույն գրում է գրատախտակի վրա նախադասություններ,
րաց թողնելով գլխավորապես այնպիսի բառեր, վորոնց ուղղա-
ղության անցումը տվյալ դասի նպատակն է: Աշակերտներն
արտագրում են իրենց տետրերում՝ լրացնելով րաց թողնված
բառերը: Որինակ՝ դասի նպատակն է անցնել «գ»-ի ուղղագրու-
թյունը: Դասառույն գրատախտակի վրա գրում է, որինակ, այս-
պիսի մի նախադասություն. «Սուրենը պարտեզից մի _____
պտկեց և մատնեցավ _____ ծառին»: Աշակերտները գրում
են. «Սուրենը պարտեզից մի վարդ պտկեց և մոտեցավ կանա-
չադարձ ծառին»:

Դասի նպատակն է, ստինք, անցնել «մ» գրի ուղղագրու-
թյունը: Դասառույն գրում է մի նախադասություն, վորը պետք
է լրացնելով ընդարձակել: Ասենք, դասառույն գրում է «Մըթ-
նեց յերկինքը», աշակերտներն արտագրում են նույնը՝ ավելացը-
նելով. «Մթնեց յերկինքը և ծածկվեց սև ամպերով»: Դասառույն
գրում է. «Հողվածը կարգացրինք և վերջացրինք»: Աշակերտները
գրում են նույնը, ընդարձակելով՝ «Հողվածը կարգացրինք, վեր-
ջացրինք, այնուհետև ամփոփեցինք»: Նույն վարժությունների
համար կարելի չէ արտագրել տալ «Քերականական վարժու-
թյուններ», դասագրքից համապատասխան մասեր*):

*) Ա. Ղարիբյան «Քերականական և ուղղագրական վարժությունների
դասագրքեր» V և VI դասարանների համար: Յերեվան, 1938 թ.

գ. Արտագրություն՝ նախադասությունները
փոխելով.— Դասառույն գրում է գրատախտակի վրա նախա-
դասություններ, խիստ աշակերտներն այդ նախադասությունները
արտագրում են փոխելով այնպես, վոր ընդհանուր միտքը
նույնությամբ պահպանվի: Որինակ, դասառույն գրում է գրա-
տախտակի վրա. «Պատրիկյանը կամաց նստեց, գլխարկը ծնկնե-
լի վրա բռնած, և նայեց շուրջը: Սենյակը զարգարված էր դահ-
լիճի պես, փարթամորեն»: Աշակերտներն արտագրում են այդ
նույն նախադասությունները՝ փոխելով՝ «Սենյակը զարգար-
ված էր դահլիճի պես փարթամորեն: Պատրիկյանը նայեց շուր-
ջը, կամաց՝ նստեց գլխարկը ծնկների վրա բռնած»: Դասառույն
գրում է՝

«Ալադյաղը՝ աստղերի մեջ՝
Ադամանդե թագը գլխին՝
Սարերեն վեր, ամպերեն վեր
Թիկն և տվել զմրուխտ դահլին»:

Աշակերտները գրում են՝

«Ալադյաղը՝ աստղերի մեջ
Ադամանդե թագը գլխին՝
Թիկն և տվել զմրուխտ դահլին,
Սարերեն վեր, ամպերեն վեր»:

Ստեղծագործական արտագրության ժամանակ, րացի ցույց
տված որինակներից, կարելի չէ կատարել և այս ձևով վարժու-
թյուններ. նախադասությունների բառերը, կամ նախադասու-
թյունները փոխելիս գործածել վոչ միայն միևնույն իմաստ
ունեցող բառեր, այլ նաև հակառակ իմաստ ունեցող բառեր, որի-
նակ՝ Մուրացանի «Չիբուխուն» հոդվածից մի հատված. «Շու-
տով հասավ այստեղ և տանուտերը: Դա միջհասակ, ամբողջով,
խոշոր դիմագծերով, խելացի աչքերով և բարեգեմ մի մարդ էր»:
Իսկ աշակերտները գրում են հակառակ իմաստ ունեցող
բառեր գործածելով. «Շուտով հասավ այստեղ և տանուտերը, վոր
փոքրահասակ, թուլակազմ, մանր դիմագծերով, խելացի աչքե-
րով և չարադեմ մի մարդ էր»:

Ստեղծագործական արտագրության ձևերին նպաստում են
աշակերտների զասարանական բառատետրերը: Ինչպես գիտենք
աշակերտները դպրոց են գալիս շատ քիչ բառապաշարով: Այս
բացը պետք է դպրոցը լրացնի: Բառապաշարի հարստացման հա-
մար դպրոցի աշխատանքներից ամենակարևորը բառապաշարի

տեսակետից բաժանորդներին գործածութիւնն եւ Դպրոցներում այս աշխատանքը հաճախ անտեսւում եւ, իսկ յերբեմն եւ տար-վում եւ այնպէս, վոր արդիւնքը քիչ եւ լինում: Բառատեւորը նախ՝ հարստացնում եւ բառապաշարը, յերկրորդ՝ սովորեցնում եւ բառի գրութիւնը:

Վորեւ նոր բառ սովորելիս պետք եւ վերլուծել այդ բառը, անշատեւ արմատը վերջավորութիւնից եւ այդ արմատից կազմել նոր բառեր, գտնել հոմանիշ, նույնանիշ եւ հականիշ բառերը եւ գրել տար: Գեղարվեստական հոգեմածներ անցնելիս մեծ ուշա-դրութիւն պիտի դարձնել համեմատութիւնների, պատկերավոր արտահայտութիւնների եւ գեղեցիկ մակդիրների վրա եւ դրանք գրել տալ բառատեւորներում:

Նոր սովորած բառերի գործածութիւնը պետք եւ ակտի-վացնել, այսինքն՝ դասատուն պետք եւ աշխատի, վոր աշակերտը նոր սովորած բառերը պատմելիս եւ գրելիս գործ ածի: Այս ոժան-դակում եւ վոճի գեղեցկացմանը եւ բառապաշարի հարստացմանը:

Այս ձևի աշխատանքը կնպաստի նաեւ գրավոր խոսքի զար-գացմանը, առանձնապէս ստեղծագործական արտագրութիւն հա-մար այդ աշխատանքը շատ արդիւնատու կլինի:

Ստեղծագործական արտագրութիւնը մեծ տեղ պետք եւ տալ մեր դպրոցներում, վորովհետեւ այդ աշխատանքը նախ՝ պարու-նակում եւ ստեղծագործական մոմենտներ, ուստի յերեխաների միջ առաջ կբերի սեր եւ հետաքրքրութիւն, յերկրորդ՝ այդ աշ-խատանքի միջոցով կզարգանա աշակերտի մտածողութիւնը եւ տրամաբանութիւնը, վոր մեծ նշանակութիւն ունի ինքնու-րոյն զբաղման խոսքի զարգացման համար:

Արտագրութիւն միւս տեսակն եւ ազատ արտագրութե-թիւնը, վոր տարվում եւ այսպէս. դասատուն կարդում եւ տեքստը, իսկ աշակերտները նայում են տեքստին, յեթե գրքից եւ, իսկ յեթե տեքստը գրքից չեւ, դասատուն այդ գրում եւ գրա-տախտակի վրա, եւ աշակերտները հետեւում են: Դասատուն բա-ցատրում եւ անհասկանալի բառերը, վերլուծում եւ բառերը ար-մատի, ածանցի, վերջավորութիւն եւ կապում անցած ուղղապար-կան կանոնների հետ: Ավելի ուշագիւր են քննում եւ ընդգծում այն բառերը, վորոնց ուղղապարութիւնն են անցում: Բոլոր բա-ռերի ուղղապարութիւնը մանրամասն բացատրելուց հետո՝ դասա-տուն կարդալ եւ տալիս աշակերտներից 2—3 հոգու: Այնուհետեւ տեքստը ծածկվում եւ: Աշակերտներն սկսում են գրել այդ նույն

տեքստը հիշողութիւնով: Վերջացնելուց հետո ստուգում են իրենց աշխատանքները՝ համեմատելով տեքստի հետ: Յաճախ դասարան-ներում այդ աշխատանքը կատարվում եւ մեկ կամ յերկու նախա-դասութիւնների սահմաններում, իսկ բարձր դասարաններում ընտրվում եւ ավելի յերկար տեքստ: Ազատ արտագրութիւն ժա-մանակ դասատուն պետք եւ ընտրի այնպիսի տեքստ, կամ հոդ-վածի այնպիսի մի հատված, վոր ամբողջական մի միտք արտա-հայտի:

Այս արտագրութիւնը կոչվում եւ նաեւ արտագրութիւն հի-շողութիւնով, վորովհետեւ, ճիշտ եւ, աշակերտն ազատ եւ բա-ռեր եւ նախադասութիւններ ընտրելու, բայց եւ միաժամանակ նա գրում եւ կարդացած կամ լսած տեքստը հիշողութիւնով:

Ազատ կամ հիշողութիւնով արտագրութիւնը դարձյալ շատ ոգտակար եւ ուղղապարական տեսակետից, նաեւ ինքնուրույնութիւնն ու տեսողական հիշողութիւնը զարգացնելու տեսակետից: Յերեխան սովորում եւ գրել հիշողութիւնով, բայց այստեղ դեր եւ խաղում ինքնուրույնութիւնը, վորովհետեւ հիշվածը գրվում եւ շարահյուսված եւ հաջորդականորեն:

Այս տիպի արտագրութիւն վրա դասատուները հատուկ ուշադրութիւն պետք եւ դարձնեն, մանավանդ այն դասարան-ներում, վորտեղ դժվարանում են ինքնուրույն շարադրել, վո-րովհետեւ այդ տիպի արտագրութիւնն, իր մեջ պարունակում եւ շարադրութիւն տարրական ելեմենտները:

II. ԹԵԼԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուղղապարական կանոններն անցնելը նշանակութիւն կունե-նա եւ իր նպատակին կձառայի, յերբ աշակերտներն այդ կանոն-ները գրավոր աշխատանքի ընթացքում գործադրել կարողանան: Դրավոր աշխատանքը կատարելիս յերեխան միշտ չի կարող հի-շել այս կամ այն ուղղապարական կանոնը եւ ըստ այնմ գրել: Նա գրում եւ բառի գրութիւն պատկերը հիշողութիւն հիման վրա: Դրավոր խոսքի դժվարութիւնը հենց այն եւ, վոր դասատուն կա-րողանա ուղղապարական կանոնը դարձնել ուսուցիչութիւն:

Ինչպէս հայտնի յեւ, սխալները լինում են տարբեր տիպի*), եւ տարբեր գրավոր աշխատանքի ժամանակ կանխվում են տար-բեր տիպի սխալներ:

*) Ար. Ղարեբյան—Հայոց լեզվի մեթոդիկա. Քերականութիւն եւ ուղ-ապարութիւն ուսուցումը, Յերեւան, 1938 թ.

Թեւադրութեան ժամանակակերպը նախ լսում է բառը, ունենում է այդ բառի գրութեան մտապատկերը, ապա անցնում գրելուն: Վորպեսզի աշակերտը լսած բառի գրութեան ճիշտ մտապատկերն ունենա, անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ: Վորոհնք են այդ պայմանները. նախ՝ պետք է խուսափել զրափոր աշխատանքը վերջին ժամերին տալուց, վերջինստե այդ դեպքում սխալներ շատ կլինեն: Յերկրորդ՝ նախորոք պիտի հայտնել թեւադրութեան որը, վորպեսզի աշակերտներն ամեն ինչ պատրաստ ունենան (տետր, թանաք, գրիչ և այլ պարագաներ, վոր անհրաժեշտ են գրավորի համար):

Թեւադրութեան ժամին դասարանում պետք է տիրի լուսթյուն: Չպիտի թույլ տալ, վոր թեւադրութեան ընթացքում աշակերտները դանազան հարցերով միմյանց դիմեն, վորովհետեւ, յերբ դասարանում դիպցեալինան վատ է, ուրեմն թույլ է պահանջվելիք ուղղորթյունը:

Մինչև թեւադրելը դասատունը բացատրում է անհասկանալի բառերը, դժվար գրություն ունեցող բառերի ուղղագրությունը: Այնուհետև ամբողջ տեքստը մի անգամ կարդում է: Աշակերտներն ուղղորթյամբ լսում են: Ապա նա կարդում է մի անգամ ճիշտ նախադասութիւն, բաժանելով մասերի. յուրաքանչյուր նախադասութիւն կարդում է մոտ 3 անգամ, վորպեսզի աշակերտը հնարավորութիւն ունենա ուղղորթյունը կենտրոնացնելու առանձին բառերի գրութեան վրա և հիշելու տվյալ բառի քերականական և ուղղագրական այս կամ այն կանոնը:

Թեւադրութեանները կարելի չէ բաժանել յերկու տիպի՝ ուսուցողական և ստուգողական: Առաջին տեսակի թեւադրութեան մեջ են մտնում բոլոր այն ձևի թեւադրութեանները, վորոնց նպատակն է այս կամ այն կերպ սովորեցնել ուղիղ գրելը: Այդ տիպի թեւադրութեան ժամանակ դասատուն պետք է կանախաժողով դժվար գրութիւն ունեցող բառերը բացատրի, կանոնը կրկնի: Գրելիս աշակերտը դժվարութեան դեպքում կարող է դիմել դասատուին և համապատասխան բացատրութիւն ստանալ: Մյուս տեսակը՝ ստուգողականը, ճիշտ է, նույնպէս սովորեցնում է աշակերտներին ուղիղ գրելը, բայց նրա գլխավոր նպատակն է ստուգելու անցած՝ կուրսը: Այս թեւադրութեան ժամանակ աշակերտը չպետք է լսի դասատուից վորեւէ բացատրութիւն:

Թեւադրութեան տեսակները շատ են, կարելի է հետեւյալները.

1. Նախադրութեան՝ գիտողական թեւադրութիւն.
2. Նախադրութեան՝ լսողական թեւադրութիւն
3. Ընտրովի թեւադրութիւն
4. Բացատրական »
5. Ինքնաթեւադրական »
6. Ինքնաստուգամբ »
7. Կրկնողական »
8. Ստեղծագործական »
9. Ազատ »
10. Ստուգողական »

1. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ-ԴԻՏՈՂԱԿԱՆ ԹԵՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տեքստը թեւադրելուց առաջ՝ դասատունը գրում է գրատախտակի վրա: Աշակերտները կարդում են մի յերկու անգամ: Դասատունը նրանց ուղղորթյունն է հրավիրում դժվար գրութիւն ունեցող բառերի վրա և ընդգծում է այդ բառերը: Տեքստը լավ յուրացնելուց հետո ծածկվում է, ապա թեւադրվում՝ դանդաղ և հանգիստ: Գրելուց հետո տեքստը ցույց է տրվում, և աշակերտներն ստուգում են իրենց գրածը:

Դիտողական թեւադրութեան տեքստը կարելի չէ վերցնել նաև դասագրքից: Այդ դեպքում աշակերտները կարդում են տեքստը, վորը, ուղղագրական վերլուծութիւնից հետո թեւադրվում է:

Դիտողական թեւադրութիւնն անց է կացվում հետեւյալ կերպ. առենք՝ դասի նպատակն է հատուկ անունների ուղղագրութիւնը: Վերցնենք մի հատված վորպէս որինակ.—

«Գերասիմը շարունակ թիավարում էր ու թիավարում: Ահա Մոսկվան արդեն յետ մնաց: Ահա գետի ափերին տաքածվում են մարգագետիններ, բանջարանոցներ, դաշտեր, պուրակներ: Յերեկ վաղին խոնավ էր: Գյուղի հոտ էր գալիս: Գերասիմը թիերը ձգեց, զլուխը սեղմեց Մումուլին...»

Ամբողջ տեքստը մեկ յերկու անգամ կարդալուց հետո կանգ ենք առնում առանձին բառերի ուղղագրութեան վրա: Դասատու.— Ինչո՞ւ չէ «Գերասիմ» բառը գլխատառով սկսվում: Աշակերտ.— Գլխատառով է սկսվում, վորովհետեւ հատուկ անունն է:

Դասատու.— Այս տեքստում բացի «Գերասիմ» հատուկ անունից՝ ուրիշ ել ի՞նչ հատուկ անուններ կան:



Աշակերտ.— «Մոսկովա», «Մոսկովա», վորոք սկսվում են գլխա-
տառով:

Դասատու.— Ել ինչ հատուկ անուններ գիտեք տեքստից դուրս:

Աշակերտ.— Սիլվա, Լեվոն, Յերեմյան, Սուրբիկ, Ռազմիկ և այլն:

Դասատու.— Ինչո՞ւ «մարգագետիններ» բառը գրվում է յեր-
կու «ն»-ով:

Աշակերտ.— Վորովհետև մարգագետին բառը բաղաձայնակ է և
վերջանում է «ն» տառով: Իսկ մենք գիտենք, վոր
բաղաձայնակ բառերը հոգնակի դարձնելու համար
պետք է ավելացնել «ներ» մասնիկը, այսպիսով
ստացվում է յերկու «ն»:

Դասատու.— Ինչո՞ւ մարգագետիններ, բանջարանոցներ, դաշ-
տեր, պուրակներ բառերը բաժանվում են միմյան-
ցից ստորակետներով:

Աշակերտ.— Այս բառերը բաժանվում են ստորակետերով, վո-
րովհետև նրանք նախադասության համադաս ան-
դամներ են:

Այսպես մանրամասն տեքստը վերլուծելուց հետո՝ դասա-
տուն առաջարկում է ծածկել տեքստը. ապա անցնում է թեկա-
դրության: Գրելուց հետո աշակերտներն ստուգում են իրենց գրա-
ծը՝ տեքստի հետ համեմատելով:

2. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ—ԼՍՈՂԱԿԱՆ ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Թեկադրության այս տեսակը տարվում է նույն ձևով, ինչպես
դիտողական թեկադրությունը, միայն այն տարբերությամբ, վոր
աշակերտները չեն տեսնում տեքստը, այլ միայն լսում են
տեքստում յեղած բառերի բացատրությունները: Մինչ թեկա-
դրելը դասատուն հարցերի միջոցով պարզում է բառերի ուղղա-
գրությունը, իսկ դժվար բառերը գրում է զրատախոսակի վրա
մինչև թեկադրության վերջը: Որինակ՝ վերցնենք թեկադրվելիք
տեքստից մի մաս.

«...ցորենի ծլած հատիկները»:

Դասատու.— Ինչո՞ւ «ծլած» բառի վերջին գրված է «ծ»:

Աշակերտ.— «Ծլած» բառի վերջում գրվում է «ծ», վորովհետև
«ծլած» ձևը հարակատար դերբայ է. իսկ մենք գի-
տենք, վոր հարակատար դերբայի վերջավորու-
թյունը գրվում է «ծ»-ով:

Դասատուն կարդում է հաջորդ նախադասությունը. «բայց
գլխան ընդհանրապես շատ ել մեծ չեք յերևում»:

Դասատու.— Ինչո՞ւ յե «ընդհանրապես» բառը գրվում է «դ»-ով:

Աշակերտ.— «Ընդհանրապես» գրում ենք «դ»-ով, վորովհետև
«ընդ» նախդիրը միանալով «հանուր» բառի հետ՝
տալիս է «ընդհանուր» բառը:

Դասատու.— Ուրիշ ինչ բառեր գիտեք «ընդ» նախդիրով:

Աշակերտ.— Ընդհանրապես, ընդամենը, ընդառաջ, ընդարձակ
և այլն:

Այսպես մյուս նախադասությունները հաջորդաբար մանրա-
մասն վերլուծելուց և քերականական կանոնների մասին մանրա-
մասն բացատրություններ տալուց հետո, դասատուն ամբողջ
տեքստը մի անգամ ել կարդում է, հետո նախադասություններով
թեկադրում:

Նախադրուշական-լսողական թեկադրությունը կարելի չե
տանել յերկու ձևով. առաջին՝ տեքստը մաս-մաս վերլուծել,
բառերի ուղղագրությունը բացատրել, ապա սկսել գրել: Այս ձև-
ով թեկադրելն ավելի նպատակահարմար է անցկացնել ցածր
դասարաններում: Յերկրորդ՝ ամբողջ տեքստի բառերը բացատրել,
ապա անցնել թեկադրության: Այս ձևը նպատակահարմար է կի-
րառել բարձր դասարաններում:

Դիտողական-նախադրուշական թեկադրությունը նպատա-
կահարմար է գործադրել ցածր դասարաններում, վորովհետև
այստեղ քերականական գիտելիքներն ավելի պակաս են, վոր
կարելի չե փոխարինել տեսողական ֆակտորով (հիշողությամբ):
Բարձր դասարաններում լսողական-նախադրուշական թեկադրու-
թյունը նպատակահարմար է գործադրել միայն այն ժամանակ,
յերբ անցնում ենք քերականական վորևէ կանոն: Այս ձևով թե-
կադրության միջոցով աշակերտը ձեռք է բերում ճիշտ գրության
կայուն և տեղական մտապատկեր, վորովհետև նա բառը մանրա-
մասն անալիզի յենթարկելով՝ գիտակցորեն սովորում է բառի
ճիշտ գրությունը:

3. ԸՆՏՐՈՎԻ ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Թեկադրության այս ձևը տարբերվում է լսողական-նախա-
դրուշական թեկադրությունից նրանով, վոր այս դեպքում աշա-
կերտները չեն գրում թեկադրված բոլոր բառերը, այլ ընտրում
են և գրում միայն այնպիսի բառեր, վորոնց ուղղագրությունը
նոր են անցել այդ շրջանում: Աշխատանքը տարվում է այսպես:
Դասատուն կարդում է, որինալ, «Հրդեհն ընդարձակվել եր»:

շակերտները գրում են. «Ընդարձակվելը: Դասատուն կարգում է՝ «այրվում եր ամենաարդյունաբեր հորերից մեկի բուրգը»: Աշակերտները գրում են, ընտրելով այն բառերը, վորոնց զրուցյունը չի համապատասխանում արտասանության. «ամենաարդյունաբեր, բուրգ»: Դասատուն կարգում է. «քամին շարունակում է սրբել փողոցը...»: Աշակերտները գրում են՝ «սրբել»: Յեւ այս ձևով թեկադրվում է մի շարք նախադասություններ, վորտեղ կան տրվյալ շրջանում անյաժ ուղղագրական կամ քերականական կանոնին վերաբերող բառեր:

Այս ձևի թեկադրությունը հարմար է այն տեսակետից, վոր վորեն կանոն անցնելիս հենց նույն դասի ընթացքում, 10—15 բառի հատկացնելով գրավոր աշխատանքին, դասատուն հնարավորություն է ստանում ստուգելու աշակերտների յուրացման չափը և սովորած կանոնին վերաբերող բառերի մտապատկերը դարձնելու ավելի կայուն և տեսական:

4. ԲԱՏԱՏՐԱԿԱՆ ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս ձևի թեկադրության ժամանակ բացատրվում են այն բառերը, վորոնց վերաբերյալ դասատուն կասկած ունի, թե կարող են սխալ գրվել: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ավանդական և քերականական տիպի հավանական սխալների վրա: Պետք է բառն ստուգարանել, վերլուծել բաղադրիչների, բացատրել ուղղագրական կանոնը և այն: Ավանդական գրություն ունեցող բառերը պետք է գրել գրատախտակին, արտասանել տալ և ուշադրությունը հրավիրել տարբերության վրա: Իսկ բարբառային բառերն աշակերտներից մի յերկուսին պիտի կրկնել տալ, այն էլ զլխավորապես այնպիսի աշակերտներին, վորոնց սխալի պատճառը բարբառային արտասանությունն է:

Նույն ձևով աշխատում ենք կանխել նաև մյուս հավանական սխալները: Իբրև որինակ վերցնենք մի հատված:—«Յիրք հասավ և մտավ իր խուցը, փրկած շանը դրեց թախտի վրա, ծածկեց իր հաստ վերնադեղնոտով, ապա նախ վազեց գոմը ծղոտի, հետո խոհանոցը՝ մի բաժակ կաթի: Վերադարձավ, վերարկուն զգուշությամբ յետ քաշեց, ծղոտը փակեց շան տակ և կաթը դրեց տախտակի վրա՝ նրա առաջ»:

Դասատուն, մինչև թեկադրությանն անցնելը, բացատրում է անհասկանալի բառերը և կանգ է առնում տեքստում այն բառերի ուղղագրության վրա, վորոնց նկատմամբ կասկած ունի, թե պարզ են սխալ գրվել:

Որինակ, այս տեքստից դասատուն գրատախտակի վրա գրում է՝ Թախտ, վերնադեղնոտ, վերադարձավ, զգուշությամբ, տախտակ բառերը: Դասատուն կանգ է առնում այս բառերի ուղղագրության վրա և հարցնում է.

Դասատու.—Ի՞նչպես պետք է գրել «Թախտ» բառը:

Աշակերտ.—Մենք գիտենք, վոր անհնչյունափոխ բառարմատներում և դրանցով կազմված բառերում բաղաձայններից առաջ լսվում է գրվում է «խ»:

Դասատու.—Տեքստում բացի այդ բառից, ել ինչ բառ կա, վոր պատկանում է նույն կանոնին:

Աշակերտ.—Նույն կանոնին է պատկանում նաև «տախտակ» բառը:

Դասատու.—Ինչպես պետք է գրել «վերնադեղնոտ» բառը:

Աշակերտ.—«վերնադեղնոտ» բառը բաձ է, կազմված «վերին» և «դեղնոտ» բառերից. «դեղնոտ» գրվում է «դ»-ով և այդպես էլ ալահայանվում է բառամիջում:

Դասատու.—Ի՞նչու «վերադարձավ» բառը գրվում է «ձ»-ով:

Աշակերտ.—«վերադարձավ» գրում ենք «ձ»-ով, վորովհետև «բ» բաղաձայնից առաջ լսվում է «ց», բայց գրվում է «ձ»:

Դասատու.—Ի՞նչպես պետք է գրել «զգուշությամբ» բառը:

Աշակերտ.—Չնայած սկզբում լսվում է «ը», բայց չի գրվում, վորովհետև գիտենք մի շարք բառեր, վորոնց սկզբից լսվում է «ը», բայց չի գրվում. որինակ՝ սպիտակ, զգեստ, ստանալ և այլն:

Այսպես տեքստը վերլուծելուց և ուղղագրական կանոնները հիշելուց հետո, դասատուն ամբողջ տեքստը մի անգամ կարդում է: Աշակերտներն ուշադրությամբ լսում են: Այնուհետև դասատուն սկսում է թեկադրել մաս-մաս՝ յուրաքանչյուր մասը կրկնելով մինչև 3 անգամ: Այդ հնարավորություն կտա աշակերտին՝ կենտրոնանալու յուրաքանչյուր բառի գրության վրա և ըստ հնարավորին քիչ սխալ անելու:

Վերջացնելուց հետո դասատուն ամբողջ տեքստը դանդաղ կարդում է, իսկ աշակերտներն ստուգում են իրենց գրածը, վորից հետո անմիջապես հավաքվում են տետրերը:

5. ԻՆՔՆԱԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Թեկադրության այս տեսակը կարելի չէ գործադրել բոլոր դասարաններում:

Նախորդ աշակերտներին տրվում է գրքից վորեն կտոր

անդիր սովորելու, բացատրվում, վերլուծվում է, ստուգվում սովորածը, ապա առաջարկվում անդիր գրել: Գրավորի այս տեսակն ինքնաթելադրութուն է կոչվում, վորովհետև այս աշխատանքի ժամանակ աշակերտն ինքն է թելադրում իրեն, այսինքն՝ իր անդիր սովորածը մտքում կրկնում է և նախադասութունն առ նախադասութուն գրի առնում: Այս դեպքում գրելուց առաջ պետք է յերեխաներին պատվիրել, վոր ուշի ուշով ուսումնասիրեն դժվար գրութուն ունեցող բառերի ուղղագրութունը (կարելի չե նույնիսկ մատնանշել այդ բառերը), տանը մի քանի անգամ գրեն և այն, ուսումնասիրեն նաև կետադրութունը և առհասարակ սովորեն այնպես, վոր գրելիս սխալ չանեն: Քրիկ տալուց առաջ պետք է մի շարք աշակերտների արտասանել տալու միջոցով ապահովել բոլոր բառերի գրական ճիշտ արտասանութունը, վորով կկանխվեն նաև հնչյունական և բարբառային տիպի սխալները:

Ինքնաթելադրութուն տալիս ավելի լավ է ընտրել գեղարվեստական կտորներ, վորոնք կարող են լինել և չափածո և արձակ:

6. ԹԵԼԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՄԲ

Թելադրության մի տեսակն է դա, վորը տարվում է ինքնաստուգմամբ: Այս տիպի թելադրութուն գրելիս՝ դասատուն չի զգուշացնում դժվար բառերի գրության մասին, այլ ուղղակի թելադրում է: Կարողում է ամբողջ տեքստը, վերջացնելուց հետո թելադրում է նախադասութունն առ նախադասութուն՝ հանգիստ և դանդաղ, իսկ աշակերտները գրում են: Թելադրութունը վերջացնելուց հետո դասատուն կարող է յուրաքանչյուր բառը դանդաղ, հնչյունները պարզ արտասանելով այնպես, ինչպես գրվում են, իսկ ավանդական գրութուն ունեցող բառերը գրում է գրատախտակին և արտասանում, ինչպես ընդունված է: Աշակերտները ստուգում և ուղղում են իրենց գրածը: Ուղղելու ընթացքում դասատուն շրջում է դասարանում և հետևում է, թե ինչպես են ուղղում: Այն սխալները, վորոնք բացատրվում են այս կամ այն ուղղագրական կանոնով, աշակերտները տեղն ու տեղը բացատրում են և գիտակցորեն ուղղում իրենց սխալները: Դասատուն նախորդ, մինչև աշակերտների սխալներն ուղղելը, հայտնում է, վոր սխալների ուղղումը պետք է կատարվի մատիտով, հակառակ պարագայում կարող է տետրը կեղտոտվել՝ ուղղումը

ճիշտ չկատարելու հետևանքով: Ամբողջ բառը սխալ գրված լինելու դեպքում, յերբ հնարավոր չի վերելը գրելու բառի ճիշտ գրութունը, ընդգծվում է սխալ գրված բառը, իսկ ճիշտը գրվում է լուսանցքում:

Այսպիսի թելադրության տեքստն ընտրելիս նկատի պետք է ունենալ, վոր աշակերտները մի ժամկա ընթացքում պետք է կարողանան թելադրվելիք տեքստը գրել, վերջացնել և ուղղել, վորովհետև այս ձևի թելադրության արժեքը հենց ուղղելու մեջ է, քանի վոր ուղղելու ժամանակ է, վոր յերեխաները սովորում են այս կամ այն բառի ճիշտ գրությանը:

Աշակերտների ուղղելուց հետո դասատուն հավաքում է տետրերը և դասարանում նորից ինքը նայում և դասի ընթացքում ուղղում, վորքան հնարավոր է: Դասատուն անպայման պետք է աշխատի նույն ժամին ուղղել և վերադարձնել տետրերը, վորովհետև թելադրության այս ձևի առավելութունը և հետաքրքրութունը հենց այն կլինի, վոր աշակերտներն իրենց գրածի արդյունքը անմիջապես գրավորից հետո տեսնեն:

Ինքնաստուգման թելադրության ժամանակ մեծ նշանակութուն ունի նախադասարանական աշխատանքի լավ կազմակերպվածութունը: Դասատուն պետք է աշակերտության ուշադրութունը կենտրոնացնի բառերի բացատրությունների վրա և հետևի, վոր բոլորը մասնակցեն դասին, վորովհետև դրանով է պայմանավորված թելադրության հաջող ընթացքը:

Թելադրության ինքնաստուգման ձևը աշակերտներին սովորեցնում է գիտակցական գրության, վորովհետև սխալներն ուղղելիս նա տվյալ բառի գրութունը լավ պետք է իմանա և հաստատ չիմանալու դեպքում պիտի հարցնի և ավելի գիտակցորեն սովորի:

Դպրոցներում պետք է թելադրության այս ձևն անցկացնել սիստեմատիկաբար, վորովհետև սկզբնական շրջանում, յերբ աշակերտներն անծանոթ են այդ աշխատանքին, նրանք ավելի դժվարությամբ են կատարում այն և դասն անցնում է անհետաքրքիր, իսկ վարժվելուց հետո աշխատանքը դառնում է ավելի արդյունավետ և հետաքրքիր:

Այս ձևի թելադրութեան տեքստն ընտրելիս պետք է նկատի ունենալ վոչ միայն միեւնոյն ժամանակաշրջանում, այլ նաև նախորդ շրջանում անցած ուղղագրական կանոնները: Տեքստը պետք է կազմել անցած բոլոր ուղղագրական կանոնների հետ կապված բառերի սահմաններում:

Այս տիպի թելադրութեանը տարբերվում է մյուս տեսակի թելադրութեաններից նրանով, վոր սա ընդգրկում է ավելի լայն շրջան և տարված բացատրական ու նախադրուշական աշխատանքներն իրեն հերթին լինում են ավելի լայն: Կրկնողական թելադրութեան կարելի չէ անցկացնել, յերբ դասատուն քերականական կանոնների մի վորոշ շրջան անցել է, բայց կասկածում է յերեխաների հիշողութեան և յուրացման վրա:

8. ՍՏԵՂԵԱԳՐՈՐԾԱԿԱՆ ՅԵԼԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բացի ամբողջական տեքստի թելադրութեանից՝ գործադրվում է նաև ստեղծագործական թելադրութեան, վոր վումանք համարում են ստեղծագործական շարադրութեան մի տեսակ: Այդ տիպի թելադրութեանը տարվում է հետևյալ ձևով: Դասատուն գրում է կամ թելադրում վորոշ բառեր: Աշակերտները կրկնակի կամ անհատորեն (նայած դասարանին) այդ բառերից կազմում են փոքրիկ հոգված և գրում իրենց տետրերում:

Ասենք դասի նախադասին է անցնել «դ» հնչյունի ուղղագրութեանը: Դասատուն տալիս է հետևյալ բառերը.— «գարուն, մայիս, վարդ, զարդ, փարթամ, մարդ»: Աշակերտները գրում են.— «Տարվա ամենագեղեցիկ յեղանակը գարունն է, մանավանդ մայիս ամիսը: Գարնանն ամբողջ ընութեանը ծածկվում է կանաչով և ծաղիկներով: Մայիսին է, վոր բացվում է ծաղիկների թաղուհի՝ վարդը, վորը համարվում է ամբողջ բուսական աշխարհի զարդը: Գարնանը վոչ միայն ընութեանն է փարթամանում ու ծաղկում, այլ և մարդիկ աշխուժանում են և աշխատանքների պատրաստութեաններ տեսնում: Սկսում է գարնանացանը...» և այլն:

Այս տիպի թելադրութեան գրելիս դասատուն պետք է ընտրի այնպիսի բառեր, վորոնց ուղղագրութեանը դասատուն անցնում է տվյալ շրջանում: Նման թելադրութեան նյութ կարելի չէ վերցնել եքսկուրսիայից, անցած հոգվածներից, բանաստեղծութեաններից, նկարի բովանդակութեանից և այլն:

Այս ձևի թելադրութեանը նպատակ է վոչ միայն ուղղագրական ունակութեանների ձեռք բերելուն, այլ նաև ինքնուրույն գրելուն: Հենց ազատ բառն ասում է, վոր աշակերտը թելադրութեան պրոցեսում լինում է ազատ, այսինքն՝ աշակերտները գրում են թելադրված տեքստի վոչ բոլոր բառերը, այլ արտահայտում են թելադրած նյութի միտքը իրենց բառերով, աշխատելով ոգտագործել տեքստի բառերը: Վորպես ազատ թելադրութեան տեքստ ընտրվում է բովանդակութեամբ ավելի հետաքրքիր և մատչելի նյութ, վորը հնարավոր լինի մասերի բաժանել:

Մինչև թելադրութեանն անցնելը՝ դասատուն տեքստում յեղած ուղղագրորեն դժվար գրութեան ունեցող բառերը գրում է գրատախտակի վրա, բացատրում բառերի գրութեանը, կրկնում ուղղագրական կանոն և այլն: Այս ձևով տեքստում յեղած բոլոր դժվար բառերի ուղղագրութեանը բացատրելուց հետո նոր անցնում է թելադրութեան:

Դասատուն ամբողջ տեքստը հանգիստ կարգում է մեկ անգամ: Մի փոքր դադարից հետո կարգում է տեքստից 2—5 տող: Յերեխաները լսելով այդ փոքրիկ մասը՝ գրում են նրա բովանդակութեանն այնպես, ինչպես հասկանում են:

Ուսուցիչն այս ձևով ամբողջ տեքստը մասերի բաժանելով կարգում է, իսկ աշակերտները բովանդակութեանը գրում են իրենց հասկացածի համեմատ: Նախորդ դասատուն նախադրուշացնում է, վոր պետք է գործածվեն անպայման ուղղագրորեն դժվար գրութեան ունեցող բառերը, հակառակ պարագայում աշակերտները չեն սովորի այդ բառերի գրութեանը և թելադրութեանն իր նպատակին չի ծառայի: Վերջացնելուց հետո դասատուն ամիշապես հավաքում է տետրերը: Տանը ուղղելուց հետո դասատուն ընտրում է մեկ կամ յերկու աշակերտի տետր և դասադանում կարգում: Յերեխաները սխալների մասին արտահայտվում են, վորը աշխուժացնում է աշխատանքը: Դասարանում կարգալու համար դասատուն պետք է ընտրի մեկ հաջող աշխատանք, և մեկ՝ անհաջող, վորպեսզի համեմատելիս յերեխաների համար պարզվի, թե ինչպես պետք է գրեն, վոր հաջող լինի և մյուս անգամ աշխատեն այդ պահանջը վերացնել:

Թելադրութեան այս ձևը գործադրվում է բոլոր դասարաններում։ Վերջինս իր մեջ ընդգրկում է այն կանոնները, վորոնց ուղղադրութունն անցել են այդ ժամանակաշրջանում։ Ստուգողական թելադրութունն պետք է տալ քառորդի վերջում, բայց վորոշ դեպքում կարելի չէ տալ նաև յերկամսյակի ընթացքում, յերբ ուղղադրութունից մի ամբողջական շրջան ավանդված է և ցանկութուն կա ստուգել յուրացումը։ Այս տիպի թելադրութունը գործադրվում է միայն ստուգման համար։ Մինչև թելադրութեան ուրը դասատուն մեկ ժամ կամ դասի վորոշ մասը հատկացնում է թելադրվելիք կանոնների կրկնութեանը և հայտնում է, թե ստուգողական թելադրութունն ինչ կանոնների շուրջը պետք է լինի։ Այս հանդամանքը հնարավորութուն է տալիս աշակերտներին զգաստանալու և հաշվառման յենթարկելու իրենց ուժերը։ Անցած կանոնները լավ չիմանալու դեպքում աշակերտները ստիպված են կրկնել դրանք, քանի վոր գիտեն, թե իրենց անցածը պետք է ստուգվի և գնահատվի։

Դասատուն պետք է այնպիսի տեքստ ընտրի, վորի մեջ մտնեն անցած ուղղադրական կանոնները և նախորդ թելադրութուններում կատարած սխալները, վորոնք ժամանակին ուղղվել և յուրացվել են։ Պետք է աշխատել, վոր անհասկանալի և անծանոթ բառեր չլինեն։ Նախ քան թելադրելը՝ դասատուն ամբողջ տեքստը կարդում է դանդաղ ու հանգիստ և բացատրում է անծանոթ և անհասկանալի բառերը։ Թելադրումը կատարվում է նախադասութուններով, ուսուցիչը յուրաքանչյուր նախադասութունը կարդում է դանդաղ, կրկնելով 2—3 անգամ։ Թելադրութունը վերջացնելուց հետո՝ դասատուն ամբողջ տեքստը կարդում է, իսկ աշակերտները ստուգում են իրենց զրաժները, վորից հետո հավաքվում են տետրերը։

Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ

Յուրյց տված թելադրութեան բոլոր ձևերը հիմնականում հետապնդում են մի նպատակ, այն է՝ աշակերտներին սովորեցնել ճիշտ գրել։ Իրենց բովանդակութեամբ թելադրութեան մյուս ձևվերից տարբերվում են ստեղծագործական և ազատ թելադրութունները, վորոնք, բացի ուղղադրական հմտու-

թյուններից, յերկխային տալիս են ինքնուրույն գրելու կարողութուն, վորովհետև այդ տիպի թելադրութուններն ունեն ստեղծագործական մոմենտներ, վորոնք նպաստում են զրավոր խոսքի զարգացմանը, Ստեղծագործական թելադրութեան ժամանակ դասատուն պետք է աշխատի առաջադրել այնպիսի բառեր, վորոնք, բացի ուղղադրական նշանակութուն ունենալուց, հնարավորութուն կտան ավելի ճոխ պատմվածք ստեղծելու։

Ստեղծագործական թելադրութեան միջոցով վոչ միայն զարգանում է աշակերտի միտքը, արամբանորեն և պլանավորված արտահայտվելու կարողութունը, այլև վոճը։

Այս տիպի թելադրութունը նպաստում է ազատ թեմաների շուրջը շարադրութուն գրելուն, վորը զրավոր տեսակների մեջ համարվում է ամենաարդյունավետ միջոցը ինքնուրույն զրավոր խոսքի զարգացման համար։

III. ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շարադրութունը վորպես զրավոր աշխատանքի մի ձև, ունի իր սխտեմատիկ ուսուցման միջոցները։ Շարադրութեան ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, վոր նա զարգացնի լեզվական ունակութունները և նպատի կոմունիստական դաստիարակութեանը։

Շարադրութեան նյութը կարող է լինել վոչ միայն դասարանում անցնելիք հոդվածների բովանդակութունը կամ հոդվածի վերլուծութունը, այլ նաև ընդհանուր բնույթ ունեցող հարցեր, ինչպես նաև դաստիարակչական հարցեր՝ սեր դեպի ուսումը, նվիրվածութուն, անձնագոհութուն, խորհրդային հայրենասիրութուն և այլն։

Ամեն մի շարադրութեան նյութ ընտրելիս՝ դասատուն պետք է նկատի ունենա, նախ՝ մանկավարժական-մեթոդական կողմը, յերկրորդ՝ ծրագրային կողմը։ Գրավորի ուսումնա-ծրագրային նպատակն է աշակերտի մեջ զարգացնել զրական խոսքի ունակութուն, նրան տալ զրական-ստեղծագործական գիտելիքներ, ինչպես նաև ուղղադրական ու կետագրական ունակութուններ։

Շարադրութունը՝ զրավոր խոսքի զարգացման հիմնական միջոցն է, վոր հնարավորութուն է տալիս արտահայտելու տեսածը, լսածը և կարդացածը, սեփական գիտողութուններն ու խորհրդածութունները և այլն։ Շարադրութեան ուսուցումը կա-

րելի յե օկսել հենց առաջին դասարանից, յերբ յերեխան լրիվ գրաճանաչ է դառնում:

Շարադրության համար պիտք է ընտրել այնպիսի հոգված, կամ հոգվածի մի այնպիսի մաս, վոր մի ամբողջական միտք արտահայտի: Շարադրությունը տարբերվում է արտադրությունից և թիւադրությունից: Արտադրության ժամանակ աշակերտը տեսնում է արտասանում է բարձր կամ մտքում: Թիւադրության ժամանակ նույնն է կտտարվում, միայն այն տարբերությամբ, վոր այստեղ աշակերտը չի տեսնում, այլ միայն լսում է գրում է իր լսածը: Մինչդեռ շարադրության ժամանակ աշակերտն ինքն է իրեն թիւադրում այս կամ այն բառը, մտքում արտասանում է և գրում:

Պարզ է, վոր շարադրության դեպքում աշակերտն իր լեզուիսյուն համեմատ կգրի և գործ կունենա գրությամբ իրեն ծանոթ բառերի հետ: Թիւադրության ժամանակ, ընդհակառակն, դասատուն ինքն է առաջադրում բառեր, վորոնք թե իմաստով և թե գրությամբ կարող են աշակերտին անծանոթ լինել: Թիւադրությունը հարստացնում է աշակերտի բառապաշարը և նպաստում ուղղագրության:

Շարադրություն գրելիս մեծ ուշադրություն պետք է դարձնենք պլան կազմելու վրա: Դեպքերը և փաստերը, նկարագրություններն ու վերլուծությունները պետք է վարող տրամաբանական հաջորդականությամբ գրվեն:

Պլանը վոչ միայն նյութի շարադրման հաջորդականությանն է նպաստում, այլև նա խոշոր նշանակություն ունի նյութի ըմբռնման համար:

Շարադրման պլանը կարելի յե կազմել՝

1. Պատմողական նախադասություններով.
2. Հարցական նախադասություններով.
3. Փոքրիկ վերնագրերով:

Պլանը կազմվում է ըստ հոգվածի բովանդակության:

Ծրգ դասարանում պլան կազմելը կարելի յե համարել գրավորի մի տեսակ, վորովհետև ամբողջ հոգվածը մասերի բաժանել, այդ մասի բովանդակությունն արտահայտել մեկ նախադասությունով՝ նշանակում է, թե կատարել մի շարք մտքերի ամփոփում: Այդ նպատակով է նաև ինքնուրույն խոսքի զարգացմանը ցեթե աշակերտը Ծրգ դասարանում սովորում է պլան կազմել, ապա նա կարող է վորեվ հոգվածի համառոտագրությունը հեշտու-

թյամբ գրել: Այդ պատճառով այս դասարանից հենց դասատուն պետք է աշակերտներին սովորեցնի հոգվածի պլան կազմել: Քանի դասարանները բարձրանում են, այնքան զուգընթացաբար մեծանում են գրավոր խոսքի պահանջները, և դասատուն հնարավորություն չի ունենա մանրամասն կանգ առնել պլան կազմելու վրա:

Վեցերորդ և յոթերորդ դասարաններում պլան կարելի յե կազմել կոնկրետիվ կամ անհատորեն՝ նայած ինչպիսի բովանդակությամբ շարադրություն է գրվում: Բովանդակության համառոտությունը կարելի յե աշակերտներին հանձնարարել տանը կազմելու, իսկ վերլուծական և բնութագրական շարադրության դեպքում պլանը պետք է կազմել կոնկրետիվ՝ դասարանում:

Շարադրության նյութը բանավոր բազմակողմանի յուրացնելուց հետո միայն կարելի յե անցնել շարադրման:

Շարադրությունները լինում են՝

1. Բովանդակության շարադրում կամ փոխադրություն.
2. Շարադրություն հարց ու պատասխանի միջոցով.
3. Չափածոյի փոխադրություն (չափածո գրվածքը արձակի վերածելը).
4. Նկարի բովանդակության շարադրություն.
5. Վերլուծական շարադրություն.
6. Բնութագրություն.
7. Ստեղծագործական շարադրություն:

1. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շարադրությունների կարևոր տեսակներից մեկը կարելի յե համարել բովանդակության շարադրությունը, վոր համարվում է ամենապարզը և կարելի յե անցկացնել բոլոր դասարաններում:

Ըստ դասարանների փոխվում է հոգվածների բովանդակությունը, դրան զուգընթաց բարդանում է և շարադրության բովանդակությունը: Բովանդակության շարադրության միջոցով աշակերտները սովորում են վորևէ դեպք կամ կարգացած հոգված վերարտադրել նույնությամբ: Բովանդակության շարադրությունը կարելի յե մշակել հետևյալ ձևով.

ա) Դեղարվեստական պարզ հոգվածների բովանդակության շարադրություն:

բ) Դեղարվեստական պատմողական շարադրություն յերրորդ դեմքով:

գ) Գեղարվեստական հոգվածի համառոտագրում:

Շարադրության Ժամանակ դասատուն հետապնդում է մի նպատակ, այն է՝ աշակերտին սովորեցնել անսխալ գրել և իր մտքերն արտահայտել ճիշտ, արամաբանական հաջորդականությամբ: Շարադրության միջոցով աշակերտը սովորում է գեղաբերը պատմել ճիշտ և հաջորդաբար: Անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ նաև մի ուրիշ կարևոր հանգամանք. դա վոճի հարցն է, դասատուն պետք է զբաղվի նաև այն հարցով, թե ինչպես կրթի աշակերտի վոճը: Կան աշակերտներ, վոճոնք հոգվածը պատմում են շատ աղքատ լեզվով և թափթիված՝ մտքերը առանց հաջորդականության: Կան նաև այնպիսի աշակերտներ, վոճոնք պատմում են գեղեցիկ, հաջորդականորեն և արամաբանված:

Աշակերտի լեզուն և վոճը կրթելու համար դասատուն նախ ինքը դաս բացատրելիս պետք է խոսի մաքուր գրական լեզվով՝ պատմելիս վորջան հնարավոր է գործածի գեղեցիկ նախադասություններ, աշխատի արտահայտվել պատկերավոր համեմատություններով. — մի խոսքով՝ նա պիտի պարապի իր վոճը կրթելու հարցով: Յերբ աշակերտը դասատուից շարունակ լսում է գեղեցիկ լեզու, ինքն էլ սկսում է իր վոճը գեղեցկացնել:

Յերկրորդ՝ հոգվածում յեղած պատկերավոր դարձվածքները և համեմատությունները կարգալիս պետք է անտարբեր չանցնել, այլ աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել դրանց վրա, պատմելիս՝ հոգվածում գործածված գեղեցիկ դարձվածքները գործածել տալ և այլն: Դրանով մենք աշակերտներին չենք զրկում ինքնուրույնությունից, այլ, ընդհակառակն, կրթում ենք նրանց վոճը:

ա) Գեղարվեստական պարզ հոգվածների բավեցուցիչաց շարադրում: Գեղարվեստական հոգվածի բովանդակության շարադրումը համարվում է ամենապարզ ձևը, վորը տարվում է մեր դպրոցներում սկսած 2-րդ և 3-րդ դասարաններից:

Այս տիպի շարադրություն կարելի չէ տալ նաև 5-րդ և 6-րդ դասարաններում, մասամբ նաև 7-րդ դասարանում:

Տեքստի բովանդակության գրավոր վերարտադրությունը տրվում է ավելի ցածր դասարաններում: Այստեղ աշակերտների բառապաշարն ավելի աղքատ ու սահմանափակ լինելու պատճառով նպատակահարմար է պատրաստի հոգվածների բովանդակությունը վերարտադրել:

Պատրաստի տեքստի բովանդակությունը գրելիս աշակերտը չպետք է խուսափի գրելու գեղեցիկ նախադասություններ, վերցրնելու պատկերավոր կտորներ և այլն. ընդհակառակն, քանի վոր աշակերտը չունի այնքան բառապաշար, վոր կարողանա ինքնուրույն գեղեցիկ շարադրել, ապա պետք է թույլ տանք, վոր նա իր լեզուի լոնի մեջ ընդունի նոր բառեր և դարձվածքներ: Յեթե աշակերտը շարադրություն գրելիս հասկացած է տեղին և գործածում գրքից վերցրած այն նախադասությունները, վոր իրեն դուր են յեկել, ապա այդ չի նշանակում, վոր այս միջոցը նրան զրկում է ինքնուրույնությունից:

Ինչ ասվեց վերևում բառատետրի դերի և նշանակության մասին, նույնը կարելի չէ ասել և այստեղ: Վորպեսզի աշակերտը կարգացած կարողանա շարահյուսված և գեղեցիկ վերարտադրել, անհրաժեշտ է նյութը բանավոր մշակելիս մանրամասն կանգ առնել պատկերավոր և գեղեցիկ հատվածների վրա, պատմելիս մեծ ուշադրություն դարձնել նախադասություններին կառուցվածքի վրա և վոճ թե բավականանալ միայն բովանդակությունը տալով:

Շարադրության համար նախ՝ պետք է ընտրել այնպիսի հոգված, վոր ծավալով շատ մեծ չլինի, բովանդակությամբ մատչելի լինի և ամբողջական միտք ունենա: Յերկրորդ՝ հոգվածը պիտի լինի ցայտուն և գեղարվեստական, գրված լինի հասկանալի և պարզ լեզվով: Հոգվածի հետաքրքիր և գեղեցիկ լինելը մեծ նշանակություն ունի, վորովհետև այդ դեպքում յերեխաները կարգում են մեծ բավականությամբ և պատմում ավելի հաջող:

Հոգվածն անցնելիս աշակերտը պետք է զխաղցորեն ըմբռնի այն՝ իր բոլոր կողմերով, հասկանա հեղինակի նպատակը, կարողանա հոգվածում յեղած գեղեցիկ կապակցել, գիտենա բառերի բացատրությունը, վերլուծի հեղինակի լեզուն և վոճը: Դասատուն պետք է լայն բացատրություն տա հոգվածի գործող անձանց մասին: Աշակերտը պետք է լավ պատկերացում ունենա և կարողանա կողմնորոշվել, իր վերաբերմունքը ցույց տալ այս կամ այն հերոսին:

Հոգվածը բազմակողմանի վերլուծելուց հետո, յերբ դասատուն համոզվում է, վոր աշակերտները հոգվածը լավ են ըմբռնել, ապա միայն անցնում է գրավոր շարադրման:

Ինչպես ասացինք, շարադրության նյութ կարող է լինել

Ուսուցիչ.— Ինչպե՞ս ե նկարագրում մայրը մայիսի 1-ը:
Աշակերտ.— Այդ որը բոլորը հավաքվել եյին մեծ փողոցում: Նվա-
զում եր զինվորական յերաժշտությունը: Փողոցով
քայլում եյին աշակերտները, նրանց հետևից՝ ծառա-
յողները, հետո՝ զորքը և ամենից վերջը՝ մի խումբ
բոլորեկներ կարմիր դրոշակներով, վորոնց մեջ եր
Վիկտորը՝ զրադարանի աղջիկը:

Ուսուցիչ.— Ո՞ւր հավաքվեցին նրանք և ի՞նչ տեղի ունեցավ:

Աշակերտ.— Ամբողջ ժողովուրդը հավաքվեց կայարանում, վոր-
տեղ տեղի ունեցավ միտինգ: Միտինգում յերույթ ու-
նեցան աղգային կուսակցության և տարբեր կուսակ-
ցությունների ներկայացուցիչներ:

Ուսուցիչ.— Ինչ ասաց Վիկտորը (տալ մանրամասն նրա ճառը):

Աշակերտ.— Ամենից վերջն ամբիոն բարձրացավ զրադարանի աղ-
ջիկ Վիկտորը՝ կարմիր թաշկինակը գլխին կապած և
ասաց, վոր ինչ այստեղ խոսվեց, բոլորը սուտ ե: Մրանք
ասում են, թե բոլոր աշխատավորները պետք ե միա-
նան: Բայց սուտ ե. իրենք չեն ուզում միանալ ուս
բանվորների հետ, սրանք մեր ժողովրդի թշնամիներն
են: Դա ի՞նչ կառավարություն ե, շարունակ կռիվ ե
ուսենում և ճնշում ժողովրդին:

Ուսուցիչ.— Ի՞նչ պատահեց Վիկտորին միտինգից հետո:

Աշակերտ.— Նույն գիշերը վորպես «ազգի դավաճան»-ի, վորպես
բոլորեկի՝ Վիկտորին ձերբակալեցին:

Ուսուցիչ.— Յերբ ազատվեց Վիկտորը բանտից:

Աշակերտ.— Վիկտորը բանտից ազատվեց 1920 թ. նոյեմբերի
29-ին, Հայաստանի խորհրդայնացումից հետո:

Ուսուցիչ.— Ձեր պատասխանների համաձայն կազմենք զրվիլիք
շարադրության պլան (Դառատուն զրատախաղի վրա
զրում ե պլանը):

1. Յերբ և վորտեղ կատարվեց դեպքը:

2. Ինչպե՞ս ե նկարագրում Վիկտորի մայրը մայիսի 1-ը:

3. Վերտեղ հավաքվեց ժողովուրդը և ինչ տեղի ունեցավ:

4. Ի՞նչ ասաց Վիկտորը իր ճառում:

5. Ի՞նչ պատահեց Վիկտորին:

2-րդ դաս—զրավոր աշխատանք:

Ուսուցիչը բաժանում ե աշակերտների դասարանական
տխարերը:

Աշակերտները զրում են ամսաթիվը և սկսում են շարա-
դրել:

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՂՋԻԿԸ

(Շարադրություն)

Այս դեպքը տեղի յե ունեցել այժմյան կիրովականում,
1920 թ. մայիսի 1-ի առավոտյան: Ամբողջ ժողովուրդը դուրս ե
յեկել տոնելու մայիսի 1-ը: Բոլորից վերջը գնում ե զորքը: Այ-
նուհետև գալիս ե մի կառք՝ մեջը նստած սպիտակ հագնված մի
աղջիկ: Նա չորս կողմը ծաղիկներ ե շաղ տալիս: Նրանից հետո
գալիս ե մի ֆուրդոն դարբնի փուքսն ու զնդանը վրան, յերկու
մարդ ել դարբնի պես հագնված յերկաթ են ձեծում: Այս բո-
լորից հետո սկսեցին խոսել տարբեր կուսակցության ներկայա-
ցուցիչներ: Յերբ խոսողները վերջացրին, նրանց տեղը կանգնեց
զրադարանի աղջիկը՝ Վիկտորը: Նա ասաց, վոր այստեղ բոլոր
ասածները սուտ են, վորովհետև նրանք ասում են, թե աշխա-
տողները և բանվորները պետք ե միանան, բայց իրենք չեն
ցանկանում միանալ ուս բանվորների հետ: Նրանք մեր ժողովրդի
թշնամիներն են և շարունակ կռվում են մեր հարևան ժողովուրդ-
ների հետ:

Նույն գիշերը ձերբակալում են Վիկտորին, վոր ազատ-
վում ե Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920 թ. նոյեմ-
բերի 29-ին:

գ) Բնութագրի ու ի՞նչ բնույթ ունի բովանդակությամբ տար-
աբայությամբ յերբող սեստիկ՝ գեղարվեստական հոգվածի համա-
ռոտումը: Այս ձևի շարադրության ժամանակ աշակերտի առաջ
դրվում ե մի ուրիշ հետաքրքիր հարց, այն ե՝ ինքնուրույն ձև-
վով տալ կարգացած հոգվածի կամ վորեւ միջադեպի կարճ հա-
մոտադրությունը: Աշակերտը պետք ե աշխատի բովանդակու-
թյունը կարճ ձևով տալ, վերցնելով հոգվածի ամենակարեւոր մոմենտ-
ները: Այս շարադրության ժամանակ աշակերտն ընտրության
հարցում ավելի ազատ ե, նա պատմում ե ավելի ինքնուրույն,
վորի շնորհիվ աշխատանքը դառնում ե ավելի հետաքրքիր: Բո-
վանդակության շարադրության ժամանակ հոգվածի համառոտու-
թյունը յերբեմն այնքան ինքնուրույն և գեղեցիկ ե վերարտա-
դրվում, վոր ինքնուրույն ստեղծագործական աշխատանքին ե մո-
տենում:

Այս յերեք տեսակի շարադրությունները հարստացնում են
աշակերտների լեզուիկոնը: Հատկապես գեղարվեստական հոգված-
ների փոխադրության ժամանակ զարգանում ե աշակերտի վոճը

և լեզուն: Աշակերտը սովորում է կարգացած, լսած, դիտած ճիշտ և նույնությամբ վերարտադրել՝ վերցնել կարևոր մասերն ու մոմենտները: Դրանով զարգանում և աշակերտի տրամաբանական ունակությունը:

2. ՏԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ

Դրավոր խոսքի զարգացման միջոցներից կարելի չե համարել հարց ու պատասխանի շարադրությունը: Դրավորի այս ձևը, վորպես շարադրության մի տեսակ, անհրաժեշտ և նախապատրաստել նախորդ: Բանավոր հոգվածը պետք է բաղմակողմանի վերլուծել, տալ բոլոր դեպքերի և կերպարների փոխհարաբերությունը, հեղինակի վերաբերմունքը դեպի հոգվածում նկարագրված դեպքերը և կերպարները—այդպես մանրամասն ուսումնասիրելուց հետո՝ դասատուն աշակերտների հետ միասին մշակում և հարցեր, վորոնք գրվում են գրատախտակի վրա: Հարցերի պատասխանները բանավոր մշակելուց հետո առաջարկվում է աշակերտներին գրատախտակից հարցն արտագրել տետրում և հերթականությամբ հարցերի պատասխանները գրել ինքնուրույն:

Այս ձևի աշխատանք կարելի չե տալ բոլոր դասարաններում, վորովհետև դասարանի համեմատ բարդանում է հարցադրումը, քանի վոր ըստ դասարանների թվ հոգվածի բովանդակությունն է փոխվում և թե անալիզի ձևը: Հարց ու պատասխանի շարադրություն կարելի չե տալ նաև միայն հարցերը մշակելով և գրատախտակի վրա գրելով, իսկ պատասխաններն առանց բանավոր մշակելու, աշակերտները կգրեն ինքնուրույն: Եթե դասատուն համոզված է, կերպով միայն այն դեպքում, յեթե դասատուն համոզված է, վոր աշակերտները ճիշտ կարող են գրել, այսինքն՝ յեթե հոգվածն աշակերտների կողմից լավ յուրացված է: Հարցերը կարելի չե մշակել հոգվածի սահմաններում և հոգվածից դուրս՝ յելլի յե մշակել հոգվածի վերլուծությունից: Հարցերը կարող են ընդհանուր բնույթ կրել: Որինակ, դասատուն 6-րդ դասարանում Մուրացանի «Տիրացու Մոսինիգ պրոցը» հոգվածը մանրամասն վերլուծում է, ծանոթացնում հին գյուղին, վորպեսզի հոգվածում նկարագրված գլուխը դրույթյունը պարզ լինի աշակերտների համար: Հոգվածը մանրամասն ուսումնասիրելուց հետո՝ դասատուն աշակերտների հետ միասին մշակում է հարցեր: Որինակ՝

1. Հին գլուխը ինչպես էին սովորեցնում աշակերտներին:

2. Ի՞նչ եր դրա պատճառը:

Յերը աշակերտներն այդ հարցերի պատասխանն արդեն բանավոր մշակել են, դասատուն առաջարկում է հարցերը գրատախտակից արտագրել և ինքնուրույն կերպով գրել պատասխանները:

Բացի հոգվածին վերաբերող հարցերից, դասատուն կարող է հոգվածից նոր հարցեր բղխեցնել: Որինակ՝ 1. ուսումը նախկին գյուղում, 2. ուսումը ներկայիս գյուղում:

Հարց ու պատասխանով շարադրելը, մանավանդ ցածր դասարաններում, խոշոր նշանակություն ունի, վորովհետև այս ձևով աշակերտները սովորում են գրել արամբանական հաշորվում աշակերտության գրավոր խոսքի կարևոր կողմն է կազմում:

Հոգվածից նոր հարցեր դուրս բերելը նպաստում է աշակերտի շրջահայացքի լայնացմանը, վորովհետև աշակերտը հին գլուխը համեմատելով մեր այժմյան գլուխի հետ՝ տեսնում է հին բացասական կողմերը և նորի առավելությունները:

Հարց ու պատասխանով կարելի չե շարադրություն առաջարկել յերը հոգվածը մեծ է, իսկ համառոտումը՝ դժվար: Յերը դասատուն զգուշ է հոգվածի շարադրության կարևորությունը, նա դասարանում հարցերն է մշակում, իսկ պատասխանները հանձնարարում է տանը գրելու:

3. ԶԱՓԱՇՈՅԻ ՓՈՒՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շարադրության մի կարևոր տեսակն է չափածոյի փոխադրությունը, վոր նպաստում է ինքնուրույն գրավոր խոսքի զարգացմանը և վոճի գեղեցկացմանը:

Այդպիսի շարադրությունը պահանջում է կրկնակի աշխատանք, մեկ՝ չափածոն արձակի վերածելը մեկ ել՝ բովանդակությունը վերարտադրելը: Աշակերտները փոխադրություն գրելու մեջ առհասարակ շատ են դժվարանում, վորովհետև բանաստեղծություն հասկանալն ավելի դժվար է, քան արձակը, և փոխադրություն գրելը՝ դա նույն է, թե բանաստեղծությունը մանրամասն արձակի վերածել: Վորպեսզի աշակերտը չդժվարանա, պետք է բանաստեղծության վերլուծությունը կազմակերպված լինի այնպես, վոր աշակերտները հասկանան բանաստեղծության բոլոր մանրամասնությունները: Դասատուն նախ պետք է բացատրի անհասկանալի բառերը, հետո աշակերտներին դարձի յուրաքանչյուր

պատկերավոր նախադասութիւնների, անձկանքների, մտկերներն
վրա, վորպեսզի աշակերտները տեսնեն բանաստեղծի թափը, վո-
գետութիւնը, մոտեցումը, իրեն՝ բանաստեղծին: Աշակերտների
համար պարզ պետք է լինի բանաստեղծութեան յուրաքանչյուր
բառը: Հաճախ բանաստեղծութեան մեջ չեն գործածվում ոճան-
դակ բայեր՝ հանգերի համապատասխանութիւնը պահպանելու
նպատակով: Այս հանգամանքի վրա աշակերտների ուշադրու-
թիւնը պետք է կենտրոնացնել, վորովհետեւ քերականութեան
մեջ նրանք ճանցում են, թե առանց ոճանդակ բայի ստորոգ-
յալ չի լինի, մինչդեռ զրքում աշակերտը տեսնում է հակառակ
յերևույթ: Յիժե աշակերտն այդ չի նկատում, մենք պետք է նրա
ուշադրութիւնը հրափրենք այդ հանգամանքի վրա: Այդպիսի
մանրակրկիտ վերլուծութիւնն աշակերտների մեջ զարգացնում
է գիտելու և յուրաքանչյուր հարցին քննադատորեն մոտենալու
հմտութիւն: Վերլուծելիս պետք է աշակերտը տեսնի այս բոլոր
մանրամասնութիւնները: Ուսումնասիրութիւնն ից հետո աշակեր-
տըն ըմբռնում է բանաստեղծութիւնը և փոխադրութիւն գրե-
լու գործն ալելի հեշտանում և:

Թուրքիայի Հարմար չեն: Ծերդ և մասամբ ճ-րդ գիտարաններում պետք է ընտրել պատմողական չափածո գրվածքներ, իսկ 7-րդ դասարանում՝ նկարագրական:

Նկարը դիտելիս աշակերտը պետք է կանգ առնի յերկու հիմնական մոմենտների վրա, նախ՝ նկարի վերաբրտագրության, յերկրորդ՝ նկարի ստեղծագործական իմաստավորման վրա:

Յերբ աշակերտը նկարի բովանդակությունը պատմում է, դասատուն հարց չպետք է տա, այլ պետք է թողնի, վոր աշակերտը մանրակրկիտ ձևով դիտի և գտնի նկարում յեղած առարկաների կապը:

Վերցնենք մի որինակ:

Դասի նպատակն է գրավոր խոսքի զարգացումը:

Նոր դաս. գրավոր աշխատանք նկարի բովանդակության

շուրջը:

Դ Կ Ա Ս Ի Բ Ե Ք Ե Գ Բ Ը

1. Ուսուցիչ.— Մենք վաղը գրելու յենք դասարանական շարադրություն, վորի նյութը վերցնելու յենք նկարից:
(Ուսուցիչը նկարը փակցնում է դրատախտակին, յիժե նկարը մեծ է և բոլոր աշակերտներին տեսանելի, իսկ յիժե նկարը փոքր է, դասատուն յուրաքանչյուր սեղանին մոտեցնելով ցույց է տալիս):

Ուսուցիչ.— Լավ դիտեցե՛ք նկարը (զաղար և տալիս):

Աշակերտներն ուշի ուշով դիտում են նկարը:

Ուսուցիչ (Յեթե նկարը հայտնի նկարչի գործ է, մի յերկու խոսքով ծանոթացնում է նկարչին).— Հավանում ե՞ք նկարը:

Աշակերտ.— Այո:

Ուսուցիչ.— Ասացե՛ք տեսնեմ ի՞նչ էք տեսնում նկարի վրա:

Աշակերտ.— Գեղեցիկ ամառային տեսարան:

Ուսուցիչ.— Լավ, ե՛լ ի՞նչ էք տեսնում:

Աշակերտ 1.— Նկարի վրա տեսնում ենք մի պիոներ, վոր ծիծաղում է, գոհ է ինչ վոր մի բանից:

Աշակերտ 2.— Նկարված է մի կատաղած արջ:

Աշակերտ 3.— Մի տնակ:

Աշակերտ 4.— Մեղվանոց:

Աշակերտ 5.— Խոր ձոր, վորի յեզրին է մեղվանոցը:

Ուսուցիչ.— Ապա գրավոր նշանակեցե՛ք դրատախտակի վրա այն կետերը, վորոնց մասին խոսելու յենք մեր շարագրության մեջ:

Աշակերտները ցանկություն են հայտնում ասելու գրավորի կետերը (ներանք կամավոր են կառուցում սյուժեն):

Ուսուցիչ.— Դրում է գրատախտակի վրա կետերը (ասում են աշակերտները):

1-ին աշակերտ.— Բնության նկարագրությունը:

2-րդ աշակերտ.— Վայրի նկարագրությունը:

3-րդ աշակերտ.— Մեղվանոցի մասին:

4-րդ աշակերտ.— Պիոներների մասին:

5-րդ աշակերտ.— Արջի մասին:

6-րդ աշակերտ.— Կոճղի մասին:

Ուսուցիչ.— Տեսային տեսրերում նշանակեցե՛ք կետերը:

Աշակերտները գրում են կետերը:

Ուսուցիչ.— Տանը կմտածե՛ք մի պատմություն, սևագրություն կանե՛ք, կմշակե՛ք, կպատրաստվե՛ք վաղվա դասարանական գրավորի համար: Վերնագիրը կամավոր ե՛:

Մ յ Ո Ւ Ն Ե Ր Ը

Ուսուցիչ.— Բաժանում է աշակերտներին դասարանական տետրերը:

Սխալները նախորոք ուղղված են աշակերտներին կողմից:

Աշակերտները գրում են:

Շարագրություն (ճկադի ծուրը)

(Վերնագիրը յուրաքանչյուր աշակերտը վորոշել է ինքը)

Ուսուցիչ.— Դրիչները ցած գրե՛ք, նայեցե՛ք կրկին անգամ նկարին (վորն արդեն փակցված է դրատախտակին), առաջ սկսեցե՛ք գրել 5 բոլոր կենտրոնականուց հետո աշակերտներն սկսում են գրել Բերվում է նկարով շարագրությունից մի նմուշ:

ՀԱՍՐԱԳԵՏ ՊԻՈՆԵՐ ՀԱՅԿԸ

Հայկինց ջոկատի շիճ կոլանտեսությունն իր մեղվանոցը տարիլ եր սարալանջի մարգագետինը: Ջոկատը Հայկին մեղվանոց ուղարկեց կոլանտեսությանն ոգնելու համար:

Մի անգամ, յերբ առավոտյան պիոներներն արթնացան, տեսան, վոր վերջին փեթակի հետ ինչ վոր բան է պատահել մեղուներն անհանգիստ պտտվում էին փեթակի շուրջը, իսկ փեթակի կափարիչն ընկած եր մի կողմ: Նրանք շատ մտածեցին և չկարողացան իմանալ՝ ով է այդ անհայտ չարագործը: Հայկը վորոշեց գիշերը չքնել վորպեսզի իմանա, թե ով է չարագործը: Գիշերվա կեսին Հայկը լսեց մեղվանոցից ինչ վոր թխկոցներ: Նա դուռը բաց արեց և դուրս նայելով տեսավ, վոր մի սև արջ

յեկեղ ե ու մեղը ե ուսում: Նա իր մոտ գենք չուներ, ուստի մտածեց՝ թող արջն ուտի հեռանա, իսկ ինքն առավոտյան դրա առաջն կառնի: Առավոտյան Հայկն արթնանալով, շուրերը հագավ և դուրս յեկավ բակը: Եւ քարեր բերեց դարսեց այն արահետի վրա, վորով գալիս եր արջը:

Գիշերն արջը նորից յեկավ, քարերը տեսնելով գազազեց ու մեկ-մեկ գցեց ձորը: Մոտեցավ փեթակին և նորից սկսեց մեղր ուտել: Առավոտյան, յերբ Հայկն արթնացավ, շուրերը հագավ և տնից դուրս յեկավ, տեսավ վոր քարերը ձորն են թափված, իսկ փեթակը նորից խառնած: Նա մտածեց մի այնպիսի նոր բան հնարել, վոր արջն այլևս բոլորովին չգա: Շատ մտածելուց հետո նա հնարը գտավ: Վերցրեց մի կոճղ, այդ կոճղից պարան կապեց, իսկ պարանի մի ծայրն ողակ անելով դրեց ճանապարհին: արջի հետքի վրա: Ինքը դարան մտավ: Գիշերն արջը նորից յեկավ և անցնելով կոճղի մոտից՝ հասավ ողակին, վորտքն ընկավ ողակի մեջ: Նա այդ չիմանալով՝ շարունակեց ճանապարհը, և հանկարծ պարանը նրա վորտքը ձգեց: Արջը շատ զայրացավ. կանգ առավ, տեսավ, վոր կոճղն իրեն չի թողնում մեղրն անուշ անելու: Նա վերցրեց կոճղը և ձգեց ձորը: Նա կարծում եր, վոր յեթե կոճղը ձգի, ինքը կարող ե մեղրն անուշ անել: Հանկարծ, ինչ դժբախտութիւն... կոճղը իրեն ել քարշ տվեց ձորը և խփեց քարին: Հայկը դուրս գալով թաքստոցից՝ ուրախացավ, վոր արջից պրծան:

Յերբ գրում վերջացնում են և դասից ֆուում ե 2—3 րոպե, ուսուցիչը կարգում ե հաջող աշխատանքներից մեկը, վորը նա գրելու ընթացքում նախորոք նայել ե:

Հետագայում՝ ուղղելուց հետո ուսուցիչը լավագույն աշխատանքներից 2—3 կարգում ե դասարանում և ընդգծում այն կարեւոր մոմենտները, թե ինչու այդ աշխատանքները համարվում են հաջող: Այդ աշխատանքների հաջող կողմերը կլինեն՝ նախ՝ դեպքերի հաջորդական շարադրումը, յերկրորդ՝ առանձին մոմենտների ճիշտ նկարագրութիւնը, յերրորդ՝ միտքն արտահայտելու համար ճիշտ և հաջող բառերի ընտրութիւնը և չորրորդ՝ բառերի դասավորութիւնը նախադասութիւն մեջ այնպես, վոր եյական յեզրակացութիւնները լինեն պարզ, հասարակ և հավանական: Դասարանում պետք ե կարգալ նաե անհաջող աշխատանքներից 1—2-ը: Աշակերտները դասատուի ղեկավարութիւնում պետք ե պարզեն թույլ աշխատանքների պակասութիւնները: Անհրաժեշտ ե ուշադրութիւն հրավիրել հետևյալ կողմերի վրա.

1. շարադրելու ժամանակ պլանից չպետք ե հեռանալ. 2. թեման համապատասխան լինի նկարի բովանդակութիւնը. 3. գործան համապատասխան կարեւոր մոմենտները հիշատակվեն. 4. չլիծողութիւն գարգացման կարեւոր մոմենտները հիշատակվեն. 5. շարադրութիւն մեջ նեն անտեղի մանրամասնութիւններ. 6. շարադրութիւն հաջորդականութիւն և հետևողականութիւն լինի. 7. շարադրութիւն մեջ լինի նկարի գործող անձնավորութիւնների նկարագրութիւնը, դերը, արտահայտութիւնները և այլն. 8. բառերի գործածութիւնը նախադասութիւնների մեջ լինի կանոնավոր և այլն:

Էրրոր գրավորներն ել, բացի հիշված պահանջներից, պետք ե նաե դնահատվեն ուղղագրական տեսակետից:

7-րդ դասարանում, բացի առանձին նկարի շարադրութիւններից, պետք ե տալ նկարների համեմատութիւններ, պետք ե անպայման նկատի ունենալ տղատանքի ուսումնադաստիարակչական կողմը:

5. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս շարադրութիւն հաջող ընթացքը կախված ե գլխավորապես նյութը դասարանում բանավոր նախապատրաստելու աշխատանքից: Նախ քան գրավորի անցնելը՝ աշակերտները պետք ե նյութը լավ ըմբռնած, հողվածը բազմակողմանի ուսումնասիրած լինեն: Դասատուն պետք ե բացատրի շարադրութիւն համար ընտրած հողվածի անհասկանալի դարձվածքներն ու պատկերավորաբար հողվածի բովանդակութիւնը լավ հասնախադասութիւնները, հողվածի հայացքները: Դասատուն պիտի կացնի, պարզարանի հեղինակի հայացքները: Դասատուն պիտի կանգ առնի դեպքերի և յերեմիութիւնների, միջավայրի և անձնավորութիւնների պատճառական կապի վրա:

Հողվածի վերլուծութիւնը 5—6 դասարաններում տարվում ե ավելի պարզ ձևով, և վոչ այնպես խորացված, ինչպես բարձր դասարաններում, վորտեղ գրականութիւն և ավանդվում: Հողվածը վերլուծելիս պետք ե ուշադրութիւն առնել՝ 1. կերպարը և հողվածի գաղափարական իմաստը, 2. ժանրը և գրական ուղղութիւնը, 3. գեղարվեստական վոճն ու լեզուն: Վերլուծական շարադրութիւն համար հողված ընտրելիս պետք ե նկատի ունենալ հողվածի դաստիարակչական կողմը:

Հողվածը վերլուծելիս աշակերտները պետք ե հասկանան կերպարները՝ վորպես իրականութիւն արտացոլում, ուստի և դասատուն, նախ քան դեպքերին և կերպարներին անցնելը, պետք ե

մի քանի խոսքով ծանոթացնի դարաշրջանին, տա տվյալ ժամանակաշրջանի տնտեսական-հասարակական փոխհարաբերությունները: Իբրև որինակ վերցնենք Նաիրի Զարյանի «Սաքո Միքինյան»-ի վերլուծական շարադրությունը V—VI դասարաններում:

Դասատուն նախ բացատրում է բոլոր անհասկանալի բառերը, կանգ է առնում պատկերավոր դարձվածքների վրա, ինչպես որինակ. «Կայծակը հեռվում իր շեղ մտքակող սարի վիթխարի կողերն է ծեծում», «Միտ մի պղտորի, պտիկ սատանա, տես կանգնած է սա սարի հասակով... իսկ ձեզ, թղուկներ, ով կմոտենա»: Դասատուն այս պատկերավոր դարձվածքների վրա կանգ առնելով բացատրում է, թե ինչպես Սաքոն մի վայրկյան մտածում է թողնել դեղը և տուն վազել, սակայն անմիջապես զգաստանում է: «Միտ մի պղտորի, պտիկ սատանա», ինչպես թողնել կոլխոզի հսկայական հարստությունը, վոր «սարի հասակով» կանգնած էր դեմը, իսկ այնտեղ այրվողն իր մասնավոր տունն է, վորը կոլխոզի նկատմամբ «թղուկ» է..., «իսկ ձեզ, թղուկներ, ով կմոտենա»: Ուրեմն մասնավոր տնտեսությունը «թղուկ» համարելով «հսկայի» դիմաց՝ պետք է պաշտպանել «հսկա» տընտեսությունը՝ կոլտնտեսությունը:

Դեպքերը բացատրելուց հետո դասատուն կանգ է առնում Սաքո Միքինյանի կերպարի վրա, վոր իր միջավայրի ծնունդ է: Այսպես մանրամասն ամբողջ հոգվածը վերլուծելուց հետո, աշակերտները պատմում են դասարանում: Այնուհետև դուրս են բերում հողվածի այն հիմնական գաղափարը, թե յուրաքանչյուր կոլխոզին է խորհրդային քաղաքացի պետք է իր պարտականություն ամենայն բարեխղճությամբ կատարի, թեկուզ և իր անձնական շահը տուժի: Սաքո Միքինյանը պաշտպանելով կոլխոզի հարստությունը՝ պաշտպանել է իրեն. «Պաշտպանել եմ յես իմը՝ կոլխոզին», ասում է նա:

Առհասարակ վերլուծական շարադրություն գրելիս դասատուի ոժանդակությունը մեծ պետք է լինի. վորովհետև ցածր դասարանների համար շարադրության այս ձևը բավական դժվար է:

Վեցերորդ և յոթերորդ դասարաններում վերլուծական շարադրություն տալիս կարելի չի վերցնել այնպիսի հողվածներ, վորտեղ տրված է հինը, գյուղացու դրությունը ցարական կարգերում: Որինակ՝ 6-րդ դասարանում կարելի չի վերլուծական

շարադրության նյութ դարձնել Հովհաննես Թումանյանի «Գուլթանի յերգը» բանաստեղծությունը, վորտեղ նկարագրված է գյուղացու դրությունը նախահեղափոխական շրջանում:

Դասատուից ստանալով ցարական կառավարության ժամանակ գյուղացու կյանքի և տնտեսական դրության մասին բացատրություն՝ աշակերտները ատելությամբ են լցվում դեպի ցարական կառավարությունը, դեպի բուրժուազիան, և ընդհակառակն, համակրանք տածում դեպի հեղինակը, վորովհետև բանաստեղծությունը վերլուծելիս նրանք տեսնում են, վոր հեղինակն աշխատավոր գյուղացու գաղափարախոսն է: Հինը մանրամասն պատկերացնելուց հետո դասատուն անմիջապես դուգահեռ է անցկացնում նորի հետ, պատկերացում է տալիս մեր յերջանիկ և ազատ կյանքի, մեր սոցիալիստական վերելքի և շինարարության մասին: Այդպիսի վերլուծական շարադրությունների ժամանակ, բացի զրավոր խոսքի դարգացումից, մենք աշակերտներին դաստիարակում ենք կոմունիստական վոգով ու հումանիստական գաղափարով:

Նման շարադրություններից չպետք է խուսափել ճիշտ է, այդ տիպի շարադրությունը դասատուից շատ է ժամանակ խլում և պահանջում է մանրակրկիտ աշխատանք, բայց այդու հանդերձ շատ ոգտավետ է, վորովհետև աշակերտը դառնում է ավելի շրջահայաց, ավելի ղեկող, սովորում է հողվածի մանրամասնությունհայաց, ավելի ղեկող, սովորում է հողվածի մանրամասնությունների վրա ուշադրություն դարձնել. իսկ այդ խոշոր նշանակությունների վրա ուշադրություն դարձնելուց հետո գրում են շարադմար: Բանավոր նյութը լավ մշակելուց հետո գրում են շարադրություն: Այդպիսի զրավոր աշխատանքի ժամանակ, յերբ դասատուն նկատում է, վոր աշակերտներից վոմանք դժվարանում են գրել, անմիջապես հարցերով հիշեցնում է և ոգնում նախադասություններ կառուցելու գործում:

6. ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դրավոր ինքնուրույն խոսքի դարգացմանը նպաստող շարադրության մի այլ տեսակն է գործող անձի բնութագրումը: Դասատուն հողվածը բաղմակողմանի վերլուծելիս, տալիս է հեղինակի ապրած դարաշրջանը և հողվածում նկարագրած անձնավորությունների մասին համապատասխան բացատրություն: Անհրաժեշտ է վորևե անձնավորության բնութագրությունը տալիս նկարագրել այն միջավայրը, վորի ծնունդն է հանդիսանում

նովյալ անձնավորութիւնը: Կտրել մենք չենք կարող անձնավորութիւնը միջավայրից, այլապես բնութագրութիւնը կլինի վերացական և վոչ ճիշտ: Յաճախ դասարաններում աշակերտը չի կարող այնպես խոր ուսումնասիրել հոգեվածն իր դեպքերով ու փաստերով, վոր անձնավորութեան բնավորութեան յուրաքանչյուր գիծ համապատասխան դեպքի կամ փաստի հետեանք կամ արդիւնը համարի: Այդ դասարաններում դասատուի ոժանդակութիւնը մեծ պետք է լինի: Նա պետք է հոգեվածի այն մասերը, վոր վերաբերում են տվյալ անձնավորութեան բնութագրման, կարգա առանձին՝ այդ կտորն անշատելով ընդհանուր հոգեվածից և ցույց տա, թե ի՞նչ յեզրակացութիւն կարելի յե հանել: Յեթե տվյալ անձնավորութիւնը կատարել և այնպիսի գործ, վորից կարելի յե յեզրակացնել, թե՛ նա ունի բնավորութեան այսինչ կամ այնինչ գիծը, ապա դասատուն պիտի կարգա կամ աշակերտին կարգալ տա այն կտորը, վորից յերևում է, թե ինչ բնավորութեան գիծ ունի այդ անձնավորութիւնը: Այս ձևով աշակերտին ստիպում ենք տեսնել հոգեվածում յեղած կերպարն իր շրջապատի հետ, այսինքն՝ աշակերտի ուշադրութեան կենտրոնն է դառնում վոչ միայն այն անձնավորութիւնը, վորի բնութագիրը նա պետք է գրի. այլև այն իրերը և օբյեկտները, վորոնք այսպես թե այնպես կապված են այդ կերպարի հետ: Հեղինակը միջավայրը և դեպքերը տալով՝ նպատակ չունի նկարագրել այդ հանգամանքները, այլ նրա նպատակն է դրանով կերպարը դարձնել ավելի ցայտուն և ընդուն: Դասատուն այս հանգամանքի վրա աշակերտի ուշադրութիւնը կենտրոնացնելով՝ նրան շոշափելի յե դարձնում այս կամ այն կերպարը:

Բնութագրութեան ամենակարևոր մոմէնտն այն է, վոր աշակերտը կերպարը տեսնի և նրա հետ կապի իրերը և դեպքերը:

Յեթե դասատուն անցնում է այնպիսի հոգեված, վորտեղ նկարագրված է հին դարաշրջանը, որինակ ճորտատիրական հասարակարգը, ապա դասատուն անպայման պետք է աշակերտներին ծանոթացնի այդ շրջանին, վորպէսզի աշակերտը լավ պատկերացում ունենա գործողութեան միջավայրի մասին և այն կապելով նկարագրված անձի հետ՝ տա այդ անձի բնութագրութիւնը: Բնութագրութեան ժամանակ պետք է հոգեվածից բերել վորոշ ցիտատներ, վորոնք հաստատում են բնավորութեան այս կամ այն գիծը: Առհասարակ աշակերտներին պետք է սովորեցնել խոսել փաստերով և խուսափել ընդհանուր բնույթ ունեցող նախադա-

սութիւններից և դարձվածքներից: Հոգեվածից ցիտատներ բերել մեծ նշանակութիւն ունի, վորովհետև նախ՝ ասածն ավելի համոզիչ է դառնում, յերկրորդ՝ իրաւքերը դառնում են իմաստալից, պերճախոս և յերրորդ՝ աշակերտը սովորում է հոգեվածից ընտրել կարևոր մոմէնտներ, վոր ստիպում է աշակերտին հոգեվածն ավելի մանրամասն դիտել, իսկ այդ մեծ նշանակութիւն ունի հոգեվածը լավ վերլուծելու և ըմբռնելու համար: Հոգեվածի կերպարները նկարագրելիս անպայման պետք է ճիշտ բացասական և դրական անձնավորութիւնների մասին և ցույց տալ, թե հեղինակի համակրանքը վորի կողմն է:

Յաճախ դասարաններում (5 և 6) բնութագրութիւն տալ, հիմնվելով ընդհանուր խնդիրների վերլուծութեան և առարկաների նկարագրութեան վրա, դժվար կլինի, վորովհետև այդ պահանջում է մանրամասն ուսումնասիրութիւն: 5-րդ և 6-րդ դասարանների բնութագրութեան առաջին քայլերը կարելի յե անել կոնկրետ դեպքերի ու փաստերի հիման վրա, վորովհետև աշակերտը դեպքերը տեսնում է այնպես, ինչպես կան՝ առանց խոշոր ընդհանրացումների:

7-րդ դասարանում բնութագրական շարադրութիւնը դառնում է ավելի լուրջ: Այստեղ բնավորութեան գծերը պիտի դիտել վոչ միայն իբրև հետեանք շոշափելի դեպքերի կապակցութեան, այլ և իրերի ու շրջապատի դասավորութեան: Որինակ, Լեվոնի («Արտիստը») բնութագրութիւնը տալիս՝ պետք է ուշադրութեան առնել նրա հոգուստը, սենյակի կահավորութիւնը, պատին փակցված նկարները, գիթարի տեղը և այլն: Այս բոլորը Շիրվանդադեն նկարագրել է մանրամասն, վորպէսզի Լեվոնի բնութագրութեան գծերն ավելի արտահայտիչ լինեն: Դասատուն պետք է կարգալ տա հոգեվածի այն մասերը, վորոնք կապված են Լեվոնի բնութագրութեան հետ: Այս ձևով աշակերտը պարզ տեսնում է Լեվոնի խարակտերը, և բնութագրութիւն գրելուն ավելի հեշտացնում է:

7-րդ դասարանում, բացառիկ դեպքում նաև 6-րդում, բնութագրութիւն գրելիս, պետք է աշակերտներն իրենք դուրս բերեն բնավորութեան գծերը, այն ել՝ ցիտատների միջոցով: Այս ձևը աշակերտների մեջ զարգացնում է վորոնելու կարողութիւնը:

7-րդ դասարանում, բացի առանձին անձնավորութիւնների, բնութագրութիւնը գրելուց, կարելի յե տալ նաև համեմատական բնութագրութիւններ: Այդպիսի դեպքերում պետք է

վերցնել այնպիսի հողված, վորտեղ նկարագրված լինեն յերկու հակադիր դասակարգերի ներկայացուցիչներ: Իբրև որինակ վերցնենք Սունգուեկյանի «Պեպո»-ն: Այստեղ պատկերացված է 60-ական թվականների սոցիալ-տնտեսական կյանքը: Պեպոն աշխատավոր մասսայի ներկայացուցիչն է, Զիմզիմով՝ առևտրավաճառական բուրժուազիայի: Համեմատական բնութագրության ժամանակ շեշտը դրվում է վոչ թե անհատ Պեպոյի և անհատ Զիմզիմովի վրա, այլ նրանց դասակարգային հատկանիշների վրա: Աշակերտները մանրամասն տալով այդ տիպերի բնութագրությունը, միաժամանակ տալիս են այդ ժամանակվա սոցիալ-դասակարգային հարաբերությունները:

Շարադրության պլանը պետք է կազմել դասարանում կոլեկտիվ ձևով, վորովհետև աշակերտը դուրս չկարողանա հարցերն ինքնուրույն ձևով մշակել:

Բացի կոնկրետ կերպարների բնութագրությունը տալուց, յերկրորդ կիսամյակից, յերբ աշակերտները սովորել են ինքնուրույն պլան կազմելով բնութագրությունը գրել, կարելի չե տալ ընդհանուր բնութ ռենկցող բնութագրություններ. ինչպես որինակ, «Խորհրդային կնոջ կերպարը», «Իմ սիրած հերոսը» և այլն:

7. ՄՏԵՆՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ստեղծագործական շարադրությունը տարբերվում է նկարի բովանդակությունը շարադրելուց նրանով, վոր աշակերտը վոչ թե տեսնում է որչեկտր և նրա համեմատ համապատասխան պատմվածք հորինում, այլ պատկերացնում է այս կամ այն իրը կամ դեպքը և ըստ այնմ շարադրում: Ստեղծագործական հորինողական շարադրությունն արժեքավոր է նրանով, վոր աշակերտը դառնում է ավելի շրջահայաց, զարգանում և ամրանում է նրա լեքսիկոնը, նա կարողանում է սովորել նկարագրել իրը, կամ յերեվել ինչ այնպես, ինչպես կա:

Այս տիպի գրավոր աշխատանք պետք է տալ 5-րդ դասարանից սկսած: Հորինողական շարադրությունը նպաստում է նաև մտքերը գեղեցիկ և պատկերավոր շարադրելու ունակության:

Ստեղծագործական-հորինողական շարադրությունների նյութըն են կազմում՝ 1. տեսածը և լսածը, 2. բնության յերեվելութները, առարկաները, կենցաղային տեսարանները, 3. ինքնուրույն պատմվածքները:

Սրանցից առաջին 2 տեսակ գրավոր աշխատանքները համեմատաբար ավելի պարզ են ու մատչելի, ուստի կարող են առաջագրվել 5—6 դասարաններին:

Տեսածի և լսածի մասին, եքսկուրսիայի, դիտած կինո նկարի մասին շարադրություն են գրում նույնիսկ ավելի ցածր դասարաններում, այնպես վոր գրավորի այդ տեսակը ծանոթ է աշակերտներին: Սակայն ցածր դասարաններում շարադրությունը մշակվում է դասարանում կոլեկտիվ կերպով, իսկ բարձր դասարաններում դառնում է ավելի ինքնուրույն, անհատական, և յուրաքանչյուրը գրում է այնպես, ինչպես հասկացել է՝ ցուցաբերելով ստեղծագործական մոմենտներ:

Դասատուն աշակերտի մեջ պետք է զարգացնի դիտելու և նյութեր հավաքելու կարողություն, վոր կարելի չե զարգացնել եքսկուրսիայի միջոցով: Եքսկուրսիա տանելուց առաջ դասատուն պետք է շարադրության թեման հայտնի աշակերտներին, վորպեսզի նրանք իրենց ուշադրությունը կենտրոնացնեն այդ ուղղությամբ: Ասենք՝ դասատուն վորոշել է աշակերտներին տանել եքսկուրսիա դեպի կոլխոզի դաշտը, ցույց տալու համար, թե ինչպես հավաքված ցորենը դարավում է սալի վրա, վոր կադրում մանրամասն կանգ է առնում աշխատանքի այդ պրոցեսի վրա, հետևում աշխատանքի հաջորդականության և ըստ այնմ պլանավորում իր գրելիք նյութը: Աշակերտները եքսկուրսիայի ժամանակ տեսած ամբողջ աշխատանքի պրոցեսի մոմենտները մանրամասն պատմում են՝ նույն մասին հաջորդականությամբ, ինչ դիտել են դաշտում: Այսպիսով նրանք սովորում են դեպքերը վերարտադրել այնպես, ինչպես դրանք կատարվում են իրականության մեջ: Այսպիսի պատմողական շարադրությունը, վոր պարունակում է դաշտային աշխատանքի մի մոմենտը, դառնում է ավելի կոնկրետ. աշակերտը սովորում է տեսածը պատկերացնելով, յեկեվակայելով պատմել, տալ դեպքերի հաջորդականությունը, ղեկավարել իրադանությունը: Այս տիպի շարադրությունն ավելի մատչելի չե, վորովհետև առհասարակ աշակերտներն ինչ վոր տեսնում և լսում են, հեշտությամբ պատմում են:

Պետք է աշխատել, վոր պատմողական շարադրության նյութը կենդանի և հետաքրքիր լինի: Այդ մեծ նշանակություն ունի հաջող շարադրելու համար, վորովհետև հետաքրքիր նյութի դեպքում աշակերտն ավելի չե վորեվորվում և գրում է ավելի արա-

Նկարագրական շարադրութիւնն պետք է սովորեցնել փոքր
երեւր և մատչելի տեսարաններ նկարագրելով: Որինակ, եքսկուր-
սիա գնացած ժամանակ դասատուն նկարագրել է տալիս վոյ թե
ամբողջ տեսարանը, այլ նրա մի վորնէ մասը, որինակ՝ դետի
հոսանք, բլուրը, ծառը և այլն: Աշակերտներն ուշադրությամբ
դիտում են նկարագրելիք որչեկտը, տալիս են առաջաբան, թե
ինչ դեպքի հետ է կապված այդ առարկան, ապա՝ առարկայի
արտաքին նկարագրութիւնը, առարկայի նշանակութիւնը և կա-

Ստեղծագործական շարադրության յերբորդ տեսակը—հորի-
նողական շարադրությունն է, վորը տարբերվում է մյուս ստեղ-
ծագործական շարադրություններից իր բովանդակությամբ։ Այս
շարադրության ժամանակ աշակերտը դրում է ինքնուրույն մի
պատմվածք, նկարագրելով վորեւեւ դեպք, պատկերելով վորեւեւ
արտահայտիչ անձնավորություն, իր կարծիքը վորեւեւ նկարի
մասին և այլն։ Վորեւեւ ստեղծագործական աշխատանք կարգա-
լիս հանդիպում ենք կերպարների և տիպերի, վորոնք ձը-

նունդ են իրենց միջավայրի: Հեղինակը ներկայացնելով կերպարները և տիպերը, նրանց չի անջատում շրջապատից, կերպարները հանդես են գալիս վորպես միջավայրի ծնունդ: Ստեղծագործական աշխատանքը գրելիս աշակերտը պետք է լավ պատկերացում ունենա իր նյութի շուրջը պատվող դեպքերի և իրերի մասին: Աշակերտը չոր ու ցամաք չպիտի նկարագրի, այլ պետք է նա մի փոքրիկ պատմվածք, վորի կենտրոնական անձնավորությունը պետք է կապված լինի շրջապատի հետ:

Աշակերտը պետք է ունենա շարադրության սխեման, պլանը, այդ նրան կոչնի իր մտքերը շարադրել հաջորդականորեն: Այդպիսի ազատ թեմա շարադրելիս դասատուն պետք է աշակերտին թույլ տա մի քանի բոպե մտածելու և մոտավորապես պլանը կազմելու և ապա անցնելու շարադրման:

Այսպիսի հորինողական շարադրություն կարելի յե տալ 7-րդ դասարանից: 5-րդ և 6-րդ դասարաններում աշակերտները պատմողական և նկարագրական ստեղծագործական շարադրություններ են գրում, իսկ 7-րդ դասարանում արդեն կարող են ազատ թեմաների շուրջը գրել: Ազատ շարադրություններ տալիս պետք է ընտրել ավելի մատչելի թեմաներ, որինակ՝ «Անձրև և դալիս», «Զմառն յերեկո», «Գարնանային առավոտ», «Ամառային արձակուրդներից մի դեպք», «Վերջալույսը դաշտում», «Մայիսմեկյան տոնը դպրոցում» և այլն: 7-րդ դասարանում ազատ շարադրություն տալիս դասատուն կարող է մի յերկու որ առաջ թեման հայտնել, վորպեսզի աշակերտները հնարավորություն ունենան նախորդ տանը մտածելու, պլան կազմելու և շարադրությունն ավելի հաջող մշակելու: Առհասարակ պետք է խոստովել աշակերտներին հանկարձակի բերելուց, չի կարելի անսպասելի կերպով ազատ թեմա տալ և առաջարկել անմիջապես շարադրելու: Այդ դեպքում աշակերտները կգրեն անփույթ, չմտածված և անտրամադիր: Դրանք նախադրյալներ են, վորոնք անպայման բացասաբար կանդրադառնան գրավորի վրա:

IV. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրավոր խոսքի ուսուցման կարևոր նշանակություն ունեցող միջոցներից մեկը պետք է համարել քերականություն գիտենալը: Յեթն աշակերտը քերականություն և ուղղագրական կանոններ գիտե, ամենայն հավանականությամբ նա քիչ սխալ

ներով կգրի, միայն անհրաժեշտ է համապատասխան վարժությունների միջոցով այդ գիտելիքները դարձնել հմտություն:

Քերականական վարժությունների միջոցով աշակերտի մեջ դարգանում է լեզվի կառուցվածքի գիտակցումը, խոսքերի տրամաբանական կապը, հարստանում է աշակերտի լեզվիկոնը, կըրթվում է վոճը, ուղղագրությունն ու ուղղախոսությունը:

Քերականությունը յուրացնել տալու նպատակով մենք գործադրում ենք տարբեր տեսակի գրավոր աշխատանքներ: Գրավոր շարաքանչյուր տեսակի միջոցով մենք աշակերտի մեջ դարգացընում ենք տարբեր տեսակի կարողություն. որինակ՝ արտագրության միջոցով մենք նպատակ ենք դնում գլխավորապես վերացընելու ավանդական տիպի սխալները, թելագրության միջոցով սովորեցնում ենք այն բառերի ուղղագրությունը, վորոնք պատկանում են այս կամ այն քերականական կանոնին, շարադրության միջոցով՝ մտքերը ճիշտ և հաջորդական ու գեղեցիկ արտահայտելուն և այլն: Ամեն տեսակի գրավոր աշխատանք կատարելիս աշակերտը ձեռք է բերում այդ բոլոր հմտությունները, բայց այս կամ այն տեսակի գրավորի մեջ գերակշռող կողմը հանդիսանում է այդ հմտություններից մեկը:

Անհրաժեշտ է առանձնապես ընդգծել քերականական վարժությունների նշանակությունն ուղղագրական և կետագրական հմտությունների զարգացման և ամրացման տեսակետից, քանի վոր մեծ մասամբ ճիշտ գրությունը սերտ կապված է բառակազմության և բառադիտության հետ, իսկ կետագրական կանոնները՝ շարահյուսության հետ:

Մեր դպրոցներում քերականական վարժությունները բոլոր դասարաններում տարվում են համարյա միևնույն ձևով: Ցածր դասարաններում աշակերտները վերլուծության նյութը բարդության պատճառով հաճախ չեն հասկանում, իսկ բարձր դասարաններում, ընդհակառակն, պարզության հետևանքով՝ նյութը դառնում է ձանձրալի:

Քերականական վարժությունների ժամանակ պետք է նկատի ունենալ այդ վարժությունների տեսակները, յուրաքանչյուր տեսակի տեղը, վարժության նյութը և վերլուծության յեղանակը:

Անհրաժեշտ է քերականական վարժությունները կատարել բաղձադան ձևով: 5-րդ դասարանից անցնում ենք հոլոկների մասին: Վերցնենք թեկուզ հայցական հոլով: 5-րդ դասարանում ծանոթության ձևով անցնում ենք, վոր հայցականը նախադա-

սության մեջ կրող առարկայի հոլովն է, իսկ 6-րդ դասարանում նույնն ավելի խորացված ձևով ենք անցնում, այդ պետք է արտահայտվի նաև քերականական վարժությունների տեսակների մեջ, Յեթն այդ նյութն անցնելիս 5-րդ դասարանում տալիս ենք արտագրության վարժություններ, ապա 6-րդ դասարանում կարելի չե առաջադրել նախադասություններ կառուցելու կամ նախադասությունների անդամների դերերը փոխելու վարժություններ և այլն: Այս ձևով անցնելիս ձանձրույթ չի առաջանա, և աշակերտները կլինեն ուշադիր, նրանց գիտելիքը կլինի ավելի խոր և հստակությամբ՝ ավելի կայուն:

Քերականական գիտելիքները չպետք է իրարից անջատ, կտրված անցնել: Ձևաբանությունը պիտի կապել շարահյուսության հետ: Յերբ, որինակ, անցնում ենք ածականը, պետք է այն վերցնենք նախադասության մեջ, տանք նրա դերը և նշանակությունը, այսպիսով ձևաբանությունը կապենք շարահյուսության հետ:

Քերականական գիտելիքները պետք է արտահայտել սխեմաների, դիագրամաների և գրաֆիկաների միջոցով: Քերականական վարժությունները պետք է վերցնել կապակցված տեքստից, վորպեզգի աշակերտն ինքն իր պրակտիկ աշխատանքում տեսնի քերականության դերը և զգա, վոր լեզուն իմանալու համար անհրաժեշտ է քերականություն գիտենալը: Քերականական վարժությունների համար ուրինակներ կարելի յե վերցնել վոչ միայն արձակ, այլ նաև հափածո գրվածքներից:

Գերականական վարժությունների ձևերից են՝

1. ԱՐՏԱԳՐԱՐՅՈՒՆ՝ անցած քերականական, ուղղագրական կանոններին վերաբերող բառերն ընդգծելով: Որինակ. անցնում ենք «այ», «յու» և այլ յերկհնչյունների ուղղագրությունը: Դասագրքից կամ քերականական վարժությունների գրքից առաջագրվում ե արտագրելմի կտոր, վորի մեջ այդ յերկհնչյունները պարունակող բառերը պետք ե ընդգծել: Որինակ:—«Այս գյուղացիք սովորություն ունեյին խիստ բարձրաձայն խոսելու»: Այս նախադասության մեջ ընդգծվում են «գյուղացիք», «սովորություն», «բարձրաձայն» բառերը:

Այս վարժությունները կարելի չէ գործադրել համարյա բոլոր քերականական և ուղղագրական կանոններն անցնելիս: Այս ձևը նպատակահարմար է նրանով, Վոր կարելի չէ որինակներ տալ հենց դասագրքից. յերբ ածականներն ենք անցնում, աշակերտներն արտադրում են տեքստում յեղած ածականները և ա-

Վերադարձնում հոմաների կամ հակաների իմաստ ունեցող ածականները։
Որինհակ՝ Հովհաննես Թումանյանի «Հին որհուռթյուն» բանա-
ստեղծության մեջ ընդգծվում են բոլոր ածականները՝ և արտա-
զրույթյունից հետո ավելացվում են համապատասխան հոմաների
ածականներ։ Ինչպես՝ Վլկթթարի-հսկա, մեծ-աժդահա, հեղ-հա-
մաականներ։ Երբեք-թեր ուրախ-զվարթ է այլն։
մեծ-պարկեշտ, առույթ-ժիր ուրախ-զվարթ ածականներ ա-

Կարելի չէ նաև հակառակ իմաստ ունեցող ածականներ ա-
վելացնել. որինակ՝ առույգ-թմրած, ուրախ-տխուր, հակա-փոքր,
գեղեցիկ-տգեղ և այլն: Այդ նույն վարժությունը կարելի չէ կա-
տարել մակբայները անցնելիս, որինակ՝ կամաց-դանդաղ, ան-
պատճառ-անպայման և այլն:

Նույնը կարելի է ահել շարահյուսությունն անցնելիս։
Կարելի է արտագրել և ընդգծել նախադասության անդամները՝
կենթակա, ստորոգյալ, յենթակայի լրացումներ, ստորոգյալի լրա-
ցումներ և այլն։ Արտագրել և ընդգծել՝ պարզ, բարդ նախադա-
սություններն իրենց բոլոր տեսակներով՝ պատմողական, հար-
ցական, բացականչական և հրամայական։

2. Գերականական գրավոր վարձույթ

Արտագրելու՞մ ե վորհե կանոնի՞ զորաբանաց՝ զորաբանաց
վորսեղ բառի մեջ չի գրելած ուղղագրական նշանակութիւն ու-
նեցող բառը։

Աշակերտներն արտագրում են «գ»-ի ուղղագրությունը, բաց թողած տառերը: Ասենք անցնում են «գ»-ի ուղղագրություններ՝ դաս-
Տրվում է կատարել «Բերականախան վարժություններ» դաս-
գրքից*), եջ 23 №25 առաջագրությունը՝ «Արտագրել, վերոշելով
«գ» թե՛ «թ» պետք է գրել. փոխարինել յեղած գծիկները համա-
պատասխան տառով»: Այս վարժությունը կաշնլի յե գործագրել
ուղղագրական կանոններ անցնելիս՝ ավանդական և բարբառային
տեղի սխալներ կանխելու նպատակով:

3. Վարժության մի ալ տեսակն ե՛րարագրություն տե-
քնստից, առանձնացնելով բառերը, և կատարել բառակազմական
վերլուծություն: Իերկնք մի քանի որինակներ: ա. Բարդ բառերն
անցնելիս աշակերտները դասագրքից արտագրում են բարդ բա-
ռերը, բաժանում բաղադրիչ մասերի և գրում այս ձևով. քա-
նա՜-աման, գրչ-ա-կար: Բ. Դրոյականակերպ ածանցներն անցնե-
լիս՝ գործ-արան, պատգամ-ավար, բեր-ք, ծնորհ-ք և այլն: Գ. Ածա-

*) Ա. Ղաբլբյան, — Բերակ, և ուղղադիր, վարժ, 1938 թ.

կանակերպ վերջածանցներն անցնելիս՝ որինակ՝ ծով-այլին, վոսկ-
յա, սեւ-աչ-յա: Դ. Ածականակերպ ժրտական նախածանցներն
անցնելիս՝ դժ-գույն ան-սովոր, s-հաւ, ապա-կեմստն: Ե. Հոլովներ
վարժություններն անցնելիս՝ սեղան-ի, գր-ում, նստաւան-ից, և
այլն: Զ. Դասական թվականների ածանցներն անցնելիս՝ որին-
ակ՝ յերկ-րորդ, յեր-րորդ, հինգ-երորդ, տասներկու-երորդ և
այլն: Է. Բայերի խոնարհման վերջավորություններն անցնելիս՝
որինակ՝ գրում եմ, գր-ելու յեմ, գր-եմ, գր-ել, հե-ռա-նալ և այլն:
Ը. Մակբայական ածանցներն անցնելիս՝ որինակ՝ ընկեր-ա-բար,
վեհ որեն որեն և այլն:

4. Իրքից արտագրվում է մի նախադասություն, անջատ-
վում են գոյականները, նշվում է նրանց դերը նախադասության
մեջ և արմատը բաժանվում է վերջավորությունից. որինակ՝
«Հայրս ամեն որ հարեանների սայլերով բեռներ եր կրում կա-
յարանից առեարականների համար»:

Հայրս—հայր-ս ուղղական հոլով, նախադասության մեջ
յենթակա:

Հարեվաններ/—հարեվաններ-ի, սեռական հոլով, նախադասու-
թյան մեջ հատկացուցիչ:

Սայլով—սայլ-ով գործիական հոլով, նախադասության մեջ ան-
ուղղակի խնդիր:

Բեռներ—բեռներ, հայցական հոլով, նախադասության մեջ ուղղ
խնդիր:

Կայարանից—կայարան-ից, բացառական հոլով, նախադասու-
թյան մեջ տեղի պարագա:

Առեարականների համար—առեարական-ների սեռական հոլով,
նախադասության մեջ նպատակի պարագա:

Այս ձևի քերականական վարժություն կարելի չի գործա-
դրել համարյա բոլոր կանոններն անցնելիս:

5. Պարզ համառոտ նախադասությունը դարձնել պարզ ընդար-
ձակ նախադասություն: Որինակ՝ «Կար հարսանիք» համառոտ
նախադասությունը.

ա) Ընդարձակվում է՝ գոյականով.— Չմռանը կար հարսանիք:

բ) Ածականով.— Չմռանը կար նոխ հարսանիք:

գ) Թվականով.— Չմռանը կար մի ձոխ հարսանիք:

դ) Դերանունով.— Նրանց մոտ ձմռանը կար մի ձոխ հար-
սանիք:

ե) Մակբայով.— Նրանց մոտ ձմռանը դարձյալ կար մի ձոխ
հարսանիք:

Այսպիսի վարժություններ կատարելուց հետո աշակերտնե-
րին կարելի չի հանձնարարել փոքրիկ, պարզ, համառոտ նախա-
դասություններից կազմված պատմվածքն ընդարձակելու: Որին-
ակ՝ Չմեռը յեկավ. որը կարճացավ. չորացան ծառերը. թռչուն-
ները չվեցին. կոլխոզնիկները հանգստանում են: Այս պարզ նա-
խադասությունները կարելի չի ընդարձակել այս ձևով.

Ցուրտ և դաժան ձմեռը յեկավ: Գեղեցիկ ու տաք որերը
կարճացան: Փարթամ ու ձոխ կանաչով զարդարված ծառերը չորա-
ցան ու մերկացան: Ծվվացող թռչունները մեղնից հեռացան՝
չվելով տաք յերկրներ: Կոլխոզնիկները դաշտային աշխատանք-
ները վերջացրած՝ հանգստանում են:

6. Պարզ նախադասությունը դարձնել բարդ նախադասու-
թյուն:

Քերականական այս վարժությունը շատ է նպաստում գրա-
վոր խոսքի զարգացմանը: Վերջինի շնորհիվ զարգանում է աշա-
կերտի մտածությունն, այսինքն նա կարողանում է իր նույն
մտքերը արտահայտել համառոտ և ընդարձակ ձևով: Այս ձևի
վարժություն տալիս, պետք է ոգտվել մեծ մասամբ գեղարվեստա-
կան գրվածքներից, տալ մի շարք կապակցված պարզ նախադա-
սություններ և հանձնարարել աշակերտներին այդ նույնն ար-
տահայտել բարդ նախադասություններով: 7-րդ դասարանում այս
վարժությունը բարդանում է, վերոմիջոց աչդ դասարանում ա-
վանդվում են բոլոր տեսակի բարդ նախադասություններ, վերոնք
պետք է լինեն վարժությունների նյութ:

7. Քերականական վարժությունների համար կարելի չի գոր-
ծադրել գրաֆիկաները, վոր նույնպես գործնական միջոց է ա-
ռարկան տեսանելի դարձնելու համար: Որինակ՝ հոլովներն անց-
նելիս կարելի չի տալ մի հոլոված, ընտրել այդ հոլովածում յեղած
գոյական անունները և ըստ հոլովումների կազմել գրաֆիկաներ:
Որինակ՝ Ա. Դարեբյանի «Քերականական վարժություններ»
դասագրքից (Էջ 42 № 66) կարելի չի անջատել գոյական անուն-
ները և կազմել ըստ հոլովումների գրաֆիկաներ:

	Ի հոլովում	ՈՒ հոլովում	ՎԱ հոլովում
Առավոտ	Կոլխոզնիկ	Այգի	Առավոտ
Կոլխոզնիկներ	Քաղհան	Տղամարդ	
Քաղհան	Ճակընդեղ		
Ճակընդեղ	Ծխախոտ		
Ծխախոտ	Ցանքեր		
Ցանքեր	Դաշտ		
Դաշտ	Ծիլեր		
Այգի	Մուլխոտ		
Տղամարդիկ			
Ծիլեր			
Մուլխոտ			

8. Կազմել դիագրամներ.

Այս ձևի քերականական վարժությունը նախ հնարավորություն է տալիս գիտելիքներն ավելի կոնկրետ ու շեշտակի դարձնելու, յերկրորդ՝ քերականական կանոնները դառնում են ավելի մատչելի:

Դիագրամներ կարելի չե կազմել ածականների տեսակները, ստորոգյալի լրացումները և բայերի ժամանակներն անցնելիս.

Ածականների տեսիլան

Վորական ած.	
Դրական	
Համեմատական	Հարաբերական
Գերադրական	Աստիճ. չունի

Ստորոգյալի լրացումներ

Պարագա	
Տեղի	
Ժամանակի	
Ձեվի	
Չափի	Խնդիր
Պատճառի	Ուղիղ
Հիմունքի	Անուղղ.

Բայերի յեղանակներն իր ժամանակներով

Սահմանական յեղանակ


Ներկա ժամ.				
Անց. անկառ.				
Ապառնի				
Անց. ապառ.				
Վաղակատար				
Անց. վաղակ.				
Հարակատար	Ըղձական	Պայմանական	Հարկադր.	
Անց. հարակա.	Ապառնի	Ապառնի	Ապառնի	Հրամայական
Անց. կատար.	Անց.ապառ.	Անց. ապառ.	Անց.ապառ.	Ներկա

9. Կազմել սխեմաներ.

Վորեն քերականական նոր նյութ անցնելիս պետք է աշխատել, վորքան հնարավոր է, այն դարձնել մատչելի, վորի հիմնադր, վորքան հնարավոր է, համարել սխեմաներ կազմելու: Նախան ձևերից մեկը պետք է համարել յե հանձնյութն անցնելուց հետո, վորպես ստուգման ձև, կարելի չե հանձնարարել տանը կազմել սխեմաներ: Այս միջոցով աշակերտն աշխատանքի պրոցեսում կնկատի, վոր այսինչ կամ այնինչ մասը խառանքի պրոցեսում կնկատի, վոր այսինչ կամ այնինչ մասը լավ չի ըմբռնել, վորովհետև սխեմաներ կազմելիս պետք է ամեն մանրամասնությոններ լավ իմանա, հակառակ դեպքում նա ըստիպված կլինի դիմելու գրքին: Սխեմաները աշակերտին հնարավորություն են տալիս նաև ստուգելու իրենց գիտեցածը:


Յերբ աշակերտը ծանոթ լինի առհասարակ սխեմա կազմելու գործին, վորին պետք է ընտելացնել աշխատանքի պրոցեսում աստիճանաբար, նա կարող է ինքնուրույն ձևով տանը կազմել, այն ել մեծ հաճությամբ, վորովհետև, յեթե նա զծագրության մեկ, այն ել մեծ հաճությամբ գծում է, ապա ինչու պետք է ձանձրանա քերականական սխեմա կազմելուց:

ՊԱՐԶ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՅԻ ՄԻ ՄԱՍԻՆ




Միեմայով կարելի չէ արտահայտել նախադասության առանձին անդամներն անցնելիս, որինակ՝ յենթակայի լրացումները, վորոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ: Նույն ձևով կարելի չէ անցնել ստորոգյալի լրացումները:

Միեմաներ կարելի չէ գծել քերականական կանոնների մեծ մասի համար: Վերցնենք մի որինակ կետադրության համար. «Կանաչ վիթխարի ընկուզենու տակ, իրենց հասակի կարգով ծաղկատակ, միասին բազմած, մի շրջան կազմած, քեֆ եյին անում և ուրախանում մեր հսկա պապերն ու մեր հայերը՝ գյուղի տները»:




Նախադասության մեջ բաղադրի անդամները բաժանվում են ստորակետներով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԽԵՄԱ




Բարդ համադասական նախադասություն. «Որը կերակի յեր, «յեղանակը լավ. այդու թափանցողներ կային»:




ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍՄԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

«Կինը նրա բարձի տակից գուրս բերեց մի մեծ ծրար, վոր կնքված էր կարմիր զմուրսով»:



ԾԻՋԱՆԿՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ

«Հասնելով քաղաքի ծայրը, կառավարն մի անգամ ևս մըտալիկեց ձիերին, և կառքը անհետացավ գլխերային խավարի մեջ»:



Սխեմաներ կազմելը շատ և ոգնում նյութի յուրացմանը: Սխեմաներ կարելի չի գործադրել նաև խոսքի մասեր անցնելիս, վորի մասին կարելի չի ողտագործել ղոկտոր Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի մեթոդիկա»-ի սխեմաների բաժինը, վորտեղ մանրամասն տրված են ամբողջ քերականական կուրսի սխեմաները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սր. Ղարիբյան—«Հայոց լեզվի մեթոդիկա». քերականության և ուղղագրության ուսուցումը. Յերիվան 1938 թ.
2. В. В. Голубков—„Методика преподавания литературы“, Москва, 1938 г.
3. Н. И. Канопыкин и Н. А. Щербакова „Методика русского языка в „начальной школе“, Ленинград 1939 г.
4. Проф. П. О. Афанасьев „Методика русского языка“, Государственное учебно-педагогическое издательство. Москва 1934 г.



Հ. Կարգավիճակը պահպանելու համար...



Երևանի քաղաքի Կոմիտեի կողմից
հաստատված և 1938 թ. հունիսի 1-ին
մտնող Կոմիտեի կողմից հաստատված
և 1938 թ. հունիսի 1-ին մտնող Կոմիտեի
կողմից հաստատված և 1938 թ. հունիսի 1-ին
մտնող Կոմիտեի կողմից հաստատված...

ԿՐԹԱՆՈՒԹՅՈՒՆ
Երևանի քաղաքի Կոմիտեի կողմից
հաստատված և 1938 թ. հունիսի 1-ին
մտնող Կոմիտեի կողմից հաստատված
և 1938 թ. հունիսի 1-ին մտնող Կոմիտեի
կողմից հաստատված...

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵ
Երևանի քաղաքի Կոմիտեի կողմից
հաստատված և 1938 թ. հունիսի 1-ին
մտնող Կոմիտեի կողմից հաստատված
և 1938 թ. հունիսի 1-ին մտնող Կոմիտեի
կողմից հաստատված...



ՀՀ Ազգային գրադարան



NL0167550

